

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԳԻՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

4. ՊՈԼՍՈՅ ՀԱՄԲԱՆ

Պաղտատի երկաթուղին շինութեան հարցը երբ անցեալ ամառ երևան եկաւ, ընդարձակօրէն բացատրեցինք այն ազդեցութիւնը զոր պիտի ունենար Արևելեան խնդրին ընդհանուր ուղղութեանը վրայ: Դեպքերը հետզհետէ եկան հաստատել Եւրոպայի ընդհանուր մասուլիս տեսութիւնները որոնցմէ եւ մենք առաջնորդուած էինք: Կէտ մը սակայն մութին մէջ կը մնար. հարցումի մը ո՛չ ոք կը համարձակէր պատասխան մը գտնել: Այդ հարցակէտին առջև դար մը առաջ շուարած իրարու երես նայել էին երկու կայսր որոնց ձեռքերուն մէջ էր այդ պահուն տիեզերքի բաղդը. Նաբոլէոն Ա եւ Ալեքսանդր Ա, մին՝ Ֆրանսայի, միւսը՝ Ռուսիոյ միահեծան տէրը: Երկու կայսրութեանց ուժերուն միացումը պիտի ներկայացնէր Եւրոպայի մեծագոյն և անդիմադրելի զօրութիւնը: Նաբոլէոն և Ալեքսանդր աշխարհքը մէջերին բաժնելու խորհուրդը կը յղանային: Բայց իրենցմէ մէկուն մատը դպաւ աշխարհի քարտէսին վրայ կէտի մը. իրարու երես նայեցան, և իրենց ծրագրէն հրաժարեցան: Միջերկրականը Սև ծովէն անջատող կէտն էր այդ, Պոլիսը: Երկու կայսրերն ալ ըմբռնեցին թէ Վոսփօրը իրենցմէ որուն ուր բաժին իյնար, աշխարհի ամբողջութեան տէրը ան պիտի ըլլար ապագային: Իրարմէ զատուեցան, ու թիւրքը նորէն Պոլիս մնաց իբր բերդապահ. ամբողջ Եւրոպա իր պահանջութիւնը կը գտնէր Վոսփօրին վրայ թիւրքերուն տիրապետութեանը մէջ: Մասնաւորապէս երկու մեծ պետութիւն, Աւստրիա և Անգլիա, իրենց համար սպանալից վտանգ մը կը համարէին Ռուսիոյ գէպի Վոսփօր յառաջացումը, ուստի եւ միշտ թիւրք կայսրութեան պահպանման շնորհ կուտակեցնէրը հանդիսացան: Մեծ պետութիւնները իրենց աշխուրջ հսկողութիւնը տարածեցին և Փոքր-Ասիոյ վրայ, որուն բոլոր ճամբաները Պոլիս կը տանէին: Եւ այսպէս մեզի համար ալ պաշտպանութիւն մը կար ուստական վտանգին դէմ:

Գետեր կան որոնք անլիշատակ ժամանակներէ հետէ

միևնոյն յատակին վրայէն անխտոր ուղղութեամբ կ'ընթանային անսայթաք: Եզերքներու բնակիչներն ալ դարերէ հետէ կեանքերնին կապած էին անոնց ընթացքին: Ճամբաներու շեղում ո՛չ ոք կրնար երևակայել: Եւ ահա օրին մէկը յատակները փոխուած են. շուրս ալ իր վազքին մէջ բնութեան խորհրդաւոր հրամաններուն հպատակուած է: Ասդին կեանքեր կը մարին, անպին նոր կեանքեր կը ծնին նոր եզերքներուն շուրջը:

Բազմազարեան գետի մը յարատեւ ուղղութեամբ անխտոր կ'ընթանար Եւրոպայի քաղաքականութիւնը Հայաստանի եւ Պոլսոյ համար: Հայը՝ իր պահպանութիւնը և իր վիճակին բարւոցումը, թիւրքը՝ իր տիրապետութեան շարունակութիւնը այդ քաղաքականութեանն ակնկալիք էին. բայց ահա ան նոր յատակներ կը փնտռէ իր ընթացքին համար, սպանալով երեսի վրայ թողու անոնք որ կեանքերնին իրեն կապած էին:

Պաղտատի երկաթուղին շինութեան խնդիրը ծագելէն քիչ ետքը երբ Ռուսիա Փոքր-Ասիոյ վրայ ունեցած իրաւունքներուն պահանջումը ներկայացուց, տեսնուեցաւ թէ մեծ պետութիւններէն ոչ մէկը թիւրքիոյ շտհբուն պաշտպանութեան փաստաբանը կը ներկայանար: Զգացուեցաւ թէ Եւրոպայի քաղաքականութեան մէջ բան մը փոխուած էր: Բեզդարի կի դահլիճը իր պահանջումներուն վաղ ընդ փոյթ գոհացում տալու համար ո՛րքան ունելի ծանրապէս կը ճնշէր Եւրոպա, Եւրոպայի քաղաքական փոփոխութիւնն ալ այնքան աւելի կը շեշտուէր: Ու վերջապէս անգլիական հանրային կարծիքին և հեղինակաւոր բերանները սկսան թէ՛ յանուն Անգլիոյ, թէ՛ յանուն Աւստրիոյ, և քիչ մըն ալ ի դիմաց Գերմանիոյ, յայտարարել թէ անհերքելի ճշմարտութիւն մը չէ որ Պոլիսը, որուն ճամբան Հայաստանն է, անպատճառ պէտք է իսլամներուն ձեռքը մնայ որպէս զի եւրոպական պետութեանց կեանքը ապահովեալ համարուի: Արինուուշտ մահիկին տեղ Բիզանդիոնի վրայ եթէ արծուէնշան զըրօշը ծածանի, իրաւ է որ Եւրոպայի մահուան ժամը զարկած պիտի ըլլայ, կը հարցնեն:

Անգլիոյ ազատական կուսակցութիւնը իր արտաքին քաղաքական ուղղութեանը մէջ միշտ համակեր երևցած է Ռուսիոյ հակաթրքական ձեռնարկներուն: Երբ երկրին իշխանութիւնը ազատականներուն կ'անցնի, Բեզդարի կի

զահլիճը իր հակաթրքական քաղաք սկանութեան մէջ աւելի զգուշաւոր կ'երեւի քան պահպանողականներու վարչութեան օրով: Կը դժկամակի ազատականներուն առջեւ ծանր խոչընդոտներ յարուցանել, զիտնալով Թիւրքիոյ նկատմամբ պահպանողականներուն գաղափարը: Ռուսիա 1893ին զիւրութեամբ աշակցեցաւ Հայաստանի բարեկարգութեանց խնդրին մէջ անգլիական կառավարութեան առաջարկներուն, վասն զի ազատականներն էին իշխանութեան գլուխը. բայց երբ Ռոզպէրի Սօլդալերի յաջորդեց, Բեդրպուրի կառավարութիւնն ալ անմիջապէս ընդդիմանալ սկսաւ հայկական բարենորոգումներու խնդրին: Այս հակառակութենէն ծագած պատահարները պարտաւորեցին Անգլիոյ ազատական կուսակցութիւնը պահանջել յանուն մարդասիրութեան, յանուն քաղաքակրթութեան որ հնաւանդ թրքասիրութիւնը վերջնապէս շնչուի Անգլիոյ արտաքին քաղաքականութեան ծրագրէն, ու Եւրոպան Անգլիոյ նախաձեռնութեամբ ձարին թոյլատրէ Պոլսոյ զրաւումը, իբր փրկանք քրիստոնեաներուն ազատագրութեանը: Բայց կուսակցութեան մը ձայնը ինքնին բաւական չէր դարեւոր քաղաքական աւանդութեանց անհետացմանը համար, և ահա այժմ պահպանողական թերթերն ալ կը սկսին ձայնակցել ազատականներուն:

Պահպանողական մամուլը նախ և առաջ կ'ընդունի թէ հայկական կոտորածներէն յետոյ այլ ևս անհնարին է Անգլիոյ աշակցութիւնը յուսալ օսմանցիներուն կայսրութեան պաշտպանութիւնը ապահովելու համար: Սակայն մարդասիրական զգացումները միշտ շահու քաղաքականութեան կը ստորադասուին, և Լոնտոնի մամուլը կը հակամիտի ընդունելու է թէ անգլիական կայսրութիւնը պիտի չվճարանքուի երբ փոխանակ սուլթանին Չարը տիրէ Պոլիս: Այդ ապահովիչ փաստերուն ամփոփումը կ'արժէ ներկայացնել:

Աւստրիա արդէն իր կարգադրութիւնները ըրած է Պոլսոյ ուսական զրաւման պատահականութեան համար: Ծերունի Թրանց-Երզէֆ կայսրը շատ իմաստութեամբ կը զիտէ թէ իր հպատակներուն կէսը Սլաւ են, և թէ ամբողջ իր ժողովուրդը ընդարձակ վաճառականութեան փափաքող է, հետեւաբար Աւստրիոյ համար աւելի շահաւոր պիտի ըլլայ Սէլանիկը ստանալ, և այդ զրաւումով նիւթական ապահովութիւն մը ձեռք անցընել, քան թէ Պոլսոյ վրայ Ռուսիոյ տիրապետութիւնը արգիւլելու համար ձեռնարկել ահեղ պատերազմի մը, որուն ելքը կանխատեսել կարելի չէ:

Գալով Անգլիոյ, երբ Չարը Պոլիս մտնէ, և Աւստրիոյ կայսրը Սէլանիկ, Հնդկաստանի ապահովութեան կամ անապահովութեան վիճակը ինչ որ է հիմակ, պիտի մնայ նոյնը: Գահիրէն Անգլիոյ ձեռքը ըլլալով, Հնդկաստանի ճամբան միշտ բաց կը մնայ. ու Եդիպտոսը Անգլիոյ և Հընդկաստանի պաշտպանութիւնը վայելելով անառիկ բերդ մըն է, կամ պիտի ըլլայ: Ալեքսանդրիա վրայ չի կայ զօրութիւն

մը որ կտրենայ Գահիրէն միեւնոյն միջոցին զրկել թէ՛ Անգլիայէն և թէ՛ Հնդկաստանէն ստանալիք ուժերէն: Պատերազմի միջոցին անգլիական նաւատորմիդ կրնայ Տարտանէլը ամենայն զիւրութեամբ պաշարել և ուսական նաւատորմը Սև ծովուն մէջ փակել:

Անգլիացիները կը կարծեն որ երբ Թիւրքիա աշխարհազարական քարտէսէն շնչուի, Աւստրիա պիտի պարտաւորուի իրենց նիզակակիցը ըլլալ, վասն զի իր մէկ կողմը միշտ ուսական յարձակումի մը ենթարկուելու վտանգին մէջ է. իր նաւատորմը շատ տկար է, ու Արիականը և Սէլանիկը պաշտպանելու անբաւական: Չօրեղ սաւատորմիդ մը միայն կրնայ ապահովել Աւստրիան. ու այդ ուժն ալ Անգլիա է որ Աւստրիոյ տրամագրութեանը տակ դնելու կարող է, փոխարէն ինքն ալ աւրօտարիական բանակին օժանդակութիւնը վայելելով: Այսպէս Եւրոպայի հզօրագոյն նաւատորմը և ցամաքային էն մեծ ուժերէն մին իրարու միանալով կարող են ուսական ո' եւ է յարձակումի յաջողութեամբ զիմագրուել:

Գերմանիա ևս պիտի աշակցի այս երկու պետութեանց իր շահերուն պահանջումով: Վիլհելմ կայսեր մեծ ծրագիրն է Գերմանացիներուն Ամերիկայ արածուն զաւթականութիւնը արդիւնել, վասն զի հոն իբր գերմանացի կը փճանան: Փրկութիւնը Անատոլիէն կ'երազէ. այդ արգասաբեր և ընդարձակածաւալ երկրին մէջ գերման զաւթականները կարող են հանգստաւէտ կեանք վայելելով հանդերձ ուրիշ ցեղերու հետ ի մի ձուլուելու վտանգէն ազատ մնալ: Հետեւաբար գերման տեսութեանց ալ հակառակ է Ռուսիոյ տարապայման հզօրացումը Արեւմտեան Ասիոյ մէջ: Ուստի երեք մեծ պետութեանց շահերը պիտի պահանջեն սերտ դաշնակցութիւն մը ընդդէմ ուսական ո' եւ է յարձակման: Բայց հաւանական չէ որ Փրքը-Ասիոյ մեծ մասին տիրելէ և Պոլիսը զրաւելէ յետոյ Ռուսիա նորանոր աշխարհակալութեանց հետեւմտիլ ուզէ, մինչ թէ՛ կեդրոնական Ասիա, թէ՛ Չինաստան, թէ՛ Սիպերիա, թէ՛ անձազման կայսրութեան ամէն կողմերը իր գործունէութեանը անսպառ ասպարէզ կայ:

Տարակոյս չի կայ թէ անգլիական մամուլը այսքան զիւրութեամբ պիտի չհամակերպէր Հայաստանի և Պոլսոյ ուսացման հնարաւորութեանը, առանց Թրանսփալի պատերազմին անկարծելի հետեւանքներուն: Բայց վեց ամիս է որ Անգլիոյ պիքոնսֆիլտեան քաղաքականութիւնը քանզուի սկսաւ Պօէրներուն հարուածներէն: Անգլիոյ պահպանողական հզօր կուսակցութիւնը անշուշտ լաւագոյն պիտի համարէր որ Թիւրքերը դեռ երկար ատեն տիրապետեն Փրքը-Ասիոյ վրայ, վարչութիւններն քիչ մը բարեկարգելով: Անգլիացիները սրբան յամառ են, այնքան ալ զիւրափոփոխ են, երբ հարկը պահանջէ: Չոր սկզբունքներու համար զոհուողներ չեն: Հիմակ աչքերնին առած են Պոլսոյ ուսացման հաւանականութիւնը, և ըստ այնմ ալ արեւելեան նոր քաղաքականութիւն մը կը ծրագրեն:

Սակայն չենք կրնար ընդունել թէ Անգլիոյ բոնադատ

առաստիճութիւնը կը նշանակէ թէ կոտորանքնուպիս աւանակարճ ժամանակամիջոցի մէջ պաշտօնապէս Չարիկրատ պիտի յորջորջուի: Ո՛չ որքան ատեն որ օրմանցիները բաւական զօրեղ բանակի մը կրթնած մնան, և տըխմար քաղաքականութիւն մըն ալ իրենց առաջնորդէ, Ռուսիոյ յառաջխաղացման քսանամեայ յատակադիժը անփոփոխ շարունակութեամբ պիտի գործադրուի: Պատեժազմը կրնայ Բլէժնանքու կրկնութեան անկարծակաւնը պահել Ռուսաց. Բեղրպուրիի կառավարութիւնը ասկէ ետքն ալ պիտի չուզէ, ինչպէս մինչեւ հիմա չուզեց, «սուրբ Ռուսիոյ» զաւակներուն արիննովն ու զրամովը տանիլ յաղթանակներ զորոնք կրնայ շահիլ ուրիշներուն արիննովը, ուրիշներուն նիւթական կորուստովը, թէ եւ քիչ մը ուշ: Փոքր-Սխիոյ երկաթուղիներուն գործին մէջ Ռուսիոյ մեծ յաջողութիւնը, որ ամբողջապէս հայ արիւնին ու Հայաստանի աւերման գինն է, կը պարզէ թէ ինչպէս Բեղրպուրիի կառավարութիւնը թիւրքիոյ վրայ կրնայ տիրապետել, խնայելով ոուս արիւնը, ոուս զրամը: Իր առաջնորդը՝ իր հզօր խելքն է, իր երաշխաւորութիւնը՝ թիւրք կառավարութեան անմտութիւնը, իր մեծագոյն նիզակակիցը՝ ժամանակը: Եւ ի՞նչ մեծ ձեռնարկ կրնայ յաջողիլ առանց ժամանակին օգնութեանը:

Հիմակ Ռուսիա հասած է հանգրուանի մը որ հաւանօրէն քիչ մը հանգիստ առնելու պէտքը պիտի զգայ, նոր արշաւանքներու համար ճամբայ ելլելէ առաջ:

ԵՐԿՈՒ ՔԱՂՍՔԱԿՐԹՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հերու նոյեմբերին ուսումնասիրելով կրօնական զանազան դաւանանքներէ իւրաքանչիւրին նպաստաւոր կամ անպատա ազդեցութիւնը Հայութեան ոգիին վրայ, համոզում կը յայտնէի թէ ո՛ր եւ է կրօնք լոկ ինքն իր էութեամբը ո՛չ կը պահպանէ մեր ազգութիւնը ո՛չ ալ կը վտանգէ: Հայ ազգայնութեան վրայ կրօնքի մը բարեբար կամ մահաբեր ազդեցութիւնը նախ եւ առաջ կը բղխի այն քաղաքական հանգամանքներէն որոնք մեզի կը շրջապատեն: Լուսաւորչական Եկեղեցին Հայութեան էն վտանգաւոր թշնամին պիտի համարուի եթէ մեր վրայ տիրապետող օտար ցեղ մը իբր պետական կրօնք Հայաստանեայցը ընդունի: Ռուսի և Հայոց համար ըստ պարագայից միայն ճշմարիտ կամ սուտ կրնայ հոչակուիլ այն վարդապետութիւնը թէ՛ այլ է կրօնքը, այլ ազգութիւնը: Հայաստանի ուսական սահմանազրօյններուն մօտ Հայոց նոր դաւանափոխութեան մը գօտեբէն ժայթքած ազգային յուզումը այս ճշմարտութեան անհերքելի ապացոյցը կը նկատենք: Լուսաւորչականներուն հետ միևնոյն հոգեւտանջ տաքնապին մատնուեցան կաթողիկ ու

աւետարանական հայրենասէր Հայերն ալ: Անխտրական մամուլին ո՛չ լուսաւորչական հեղինակաւոր ներկայացուցիչները, ո՛չ կաթողիկ հանդէսները, ո՛չ աւետարանական գրիչները կը մտաբերեն ազգայնութեան ոգիին անվտանգ համարիլ ուսական դաւանանքին Հայոց մէջ ծաւալումը. ո՛չ մէկը մտքէն կ'անցընէ յայտարարել թէ ա՛յլ է կրօնքը, ա՛յլ է ազգութիւնը:

Համազգային այս զգացումը կ'ապացուցանէ թէ հայ ժողովուրդը իր ամբողջութեամբը կը զգայ որ քրիստոնեայ մեծ պետութեան մը Հայաստանի մերձեցումը անգամ վտանգաւոր է Հայ ազգին. իսկ տիրապետութիւնը՝ մեռելաբար կափարիչի մը անշարժութեամբը պիտի ծանրանայ Հայութեան դիակին վրայ:

Հայ ժողովրդին բնագոյր զինքը չի խաբեր, բայց կը հարցնենք թէ երբ Ռուսերը Հայաստանի տիրելու ըլլան, մեր ուսացումը Եկեղեցիէն պիտի սկսի, թէ Եկեղեցիով պիտի վերջանայ. նախ կրօնքնիս պիտի փոխենք ու ապա Ռուս պիտի ըլլանք, թէ նախ Ռուս պիտի ըլլանք ու ապա կրօնափոխ: Այս հարցումին պատասխանը պիտի ջանամ փնտռել թիւրքիոյ և Ռուսիոյ Հայոց արդի կեանքին տարբերութեանց մէջ:

* * *

Ընդհանրապէս կը կարծենք թէ Հայ Եկեղեցին ուսականին մէջ ձուլուելով է միայն որ Հայութիւնն ալ ուսացման մէջ պիտի հալի: Սխալ համոզում որ կը ծնի միւս այն սխալումէն թէ Հայը թիւրք պետութեան ներքեւ իր ազգութիւնը պահած է շնորհիւ միայն եւ միմիայն այն հիմնական տարբերութեանց որոնք քրիստոնէական ու իսլամական կրօնքները իրարու անհաշա թշնամիներ ըրած են: Հայոց Եկեղեցին Հայ ազգը չէ պահպանած, այլ հայ ազգութենէն մտն մը փրկելու սատարած է հըզօրապէս, աջակցութեամբ բարոյական ուրիշ ուժերու: Մանաւանդ մեր վրայ տիրող ցեղին՝ մենէ տկարագոյն քաղաքակրթութեանն է որ շատ բան կը պարտինք: Հիմակուան Հայաստանը հիմնովին կը տարբերի հինգ դար առաջուան մեր հայրենիքէն: Այն ատեն ամենաստուար մեծամասնութիւնը կը կազմէինք մեր երկրին բնակիչներուն, այժմ փոքրամասնութիւնն ենք: Ամբողջութիւն մը պահպանուած չի համարուիր երբ անոր մեծագոյն մասը ապականներ է կամ ջնջուեր:

Իսլամութիւնը վայրագ, բիրտ զօրութեան կոթնած, ուժասպառ տկարացուց քրիստոնեայ Հայութիւնը: Իսլամական արշաւանքները, նոյնիսկ թիւրքերուն Հայաստան երեւումէն առաջ, իրենց հետ բերին երեք տեսակ աղէտ որոնք Հայաստանը հետզհետէ դատարկեցին քրիստոնեայ Հայերէն: Առաջին աղէտը եղաւ քրիստոնեաներու անխնայ կոտորածը: Մարտիրոսութիւնը կրօնական գերագոյն առաքինութիւնն է որ հաւատացեալներու համար այս դժբաղդութեանց աշխարհէն զէպի երանութեան միջավայրի մը ապահովագոյն ճանապարհը կը հա-

մարտի. սակայն նահատակները չեն նպաստեր իրենց ցեղին այս երկրիս վրայ բազմաթուութեանը. ընդհակառակը: Երկրորդ աղէտը եղաւ ստուարաթիւ Հայոց իրենց երկրէն հեռացումը: Այդ վտարանդիները օտար աշխարհներ հանգիստ ապրեցան, բայց մեծ մասամբ անհետ եղան իրր Հայ. ու անդին, իրենց բնավայրը, լայնատարած տեղ մը բաց թողուցին օտարին առջեւ: Երրորդ աղէտը եղաւ ահագին թուով Հայոց իսլամացումը: Հաւատափոխ Հայերը իրենց ցեղէն անջատուեցան, ու խոսնուելով հայ աշխարհը արշաւող ցեղին հետ, զայն զօրացուցին եւ իրենց ազգը տկարացուցին: Քրիստոնէական կրօնքը չկրցաւ այս շարիքներուն առջեւ առնել. իսլամութեան պատերազմը իրեն դէմ էր, ինք յաղթուեցաւ, իրեն հետ պարտութեան մատնելով եւ Հայութիւնը:

Քրիստոնեայ Հայոց ջնջումին համար գործադրուած վաղընջուց քաղաքականութիւնը կէտ առ կէտ վերանորոգուեցաւ եւ մեր օրերը: Թիւրքիա՝ 1895-96ին Հայերը անխնայ ջարդուեցան. մաս մը Հայեր իրենց փրկուութիւնը փնտոցեցին փախուստի մէջ, ինչպէս Վանէն կողմէն գաղթող բանի մը բիւր Հայերը, ու մաս մըն ալ իսլամացաւ որպէս զի իրր մարդ ապրի: Քրիստոնէութիւնը դարձեալ անզօր գտնուեցաւ Հայուն նիւթական կեանքը պահպանելու: Բայց ինչպէս որ Թիւրքերուն կամքէն անկախ պարագաներ իրենց չթողատրեցին ամբողջացնել Հայութեան սպասուած ջնջումը, նոյն եւ նախկին դարերու մէջ տարբեր պարագաներ նպաստեցին Հայոց կարեւոր մէկ մասին իսլամներու ճիրաններէն փրկութեանը:

Հայութիւնը նմանեցաւ բարձրարեքձ կաղնիին որուն ճիւղերը իսլամը կտոր կտոր ըրաւ, բունն ու կոճը սակայն արմատախիլ ընելու անկարող գտնուելով: Բունը մինչեւ իր կածիններուն մէջ կը մնար կենդանի, հոն գաղտնածածուկ կը սողոսկէր կեանքի Հիւթը, կը սնուցանէր, կը պահէր կը պահպանէր Ոգին ծերօն ծառին. ու ա՛ն միշտ ծլարձակ, միշտ կը սպառնար աճունաճիւղ բարձրանալ. եւ իսլամն ալ միշտ տապարը ձեռքը զայն յօշոտել, ճղակտոր ընել կը ճգնէր: Բայց կենսատու հիւթը միշտ կը զօրացնէ ծառը, մինչեւ որ անիկա օր մը իր յաղթ իրանէն իր հովանին լայնասփիւռ տարածէ հողին վրայ որուն տէրն է անխշատակ դարերէ հետէ: Հայկական քրիստոնէութիւնը կաղնիին կենսատու հիւթը եղաւ. ահա ինչ որ Հայութիւնը կը պարտի իր Եկեղեցիին եւ ահա թէ ինչո՛ւ զրկապինդ այդ մեծ ուժին կը փարի:

Սակայն հիւթը պիտի չկրնար ծառը վերընձիւղել առանց հողին, առանց ջուրին, առանց արեւուն զօրութեանը: Եւ ուսկի՛ց նոյնիսկ հիւթին ալ կեանքը: Հայ ազգութիւնն ու հայ կրօնքը այդ կեանքը հայրենի հողէն ձծեցին, հայրենի լեզուէն, հայրենի պատմութեանէ: Եւ կրօնք, լեզու, հող, պատմութիւն, քառսուն դարու կեանք ստեղծած էին հայկական քաղաքակրթութիւն մը որուն դէմ վերջի վերջոյ պիտի փշրուէր օտար ցեղին սուրը:

Հայը իսլամութեան առջեւ կը հանէր իր քաղաքակրթութիւնը, որ հետզհետէ բարձրանալով հաւատարակչաց բիրտ ուժը: Այդ հաւատարակչութիւնը օր մըն ալ սկըսաւ խանգարել ի Ֆեաս իսլամին: Մինչ մէկ կողմէն Թիւրքին ուժը կը նուաղէր, միւս կողմէն Հայուն ուժը կ'աճուէր: Հայ ցեղին քաղաքակրթութիւնը կը գերազանցէր իր երկիրը աշխարհակալող ցեղին նիւթական զօրութիւնը: Հինգ դարու լուծեան մէջ տուկուն եւ համբերատար աշխատութեամբ անդադար կը վերանորոգէինք մեր սպառումները, միշտ յաւելում մըն ալ բարդելով տեղը բերուած կորուստներուն վրայ: Հայ ազգը երկրին անտեսական կեանքին վարիչը կը ներկայանար, ու բարոյական մեծկակ ուժի մըն ալ տիրացած էր: Իսլամը խոսվեցաւ: «Հայերը այս երկրին մէջ շատ հարուստ են, իսլամները աղքատ» կը յայտարարէր դաճնութեամբ սուլթան Համիտ անգլիական զեսպանին: Իսկ Հայոց բարոյական գերազանցութիւնը երեւան կուգար բազմազան երևոյթներով, որոնց մէջ իսլամին համար է՛ն յուզիչը՝ յեղափոխական շարժումը եղաւ: Ինչ որ ալ ըլլան Թիւրքիոյ Հայոց Յեղափոխութեան նկատմամբ քննադատութիւններուն ներքին արժէքը, պէտք է ընդունել թէ անձնազոհողութեան համար խանդավառ մրցումը կը հաստատէ թէ ազգային պարտականութեան գաղափարը տիրած է Հայոց մտքին: Հայրենիքի համար պարտականութեան մը գաղափարը Թիւրքերու մտքին մէջ չի կրնար սղմիլ: Ահա քսան եւ հինգ տարի է որ օսմանեան կայսրութիւնը դէպի կորուստի անդունդը կ'ընթանայ, օրէ օր աւելի արագալագ: Թիւրքերը կը զգան թէ շեշտակի հարուստ մը միայն պէտք է սպասեն իրենց փրկութիւնը, ու զեռ ոչ մէկ իսլամի ձեռք փրկարար դաշոյնին երկնցաւ: Յօժարակամ անձնազոհողութեան տրամադիր սիրտ մը չգտնուեցաւ զեռ: Մեծ սրտերը ժողովրդին սրտէն կը ծնին. Հայը՝ անձնազոհը ծնաւ, իսլամը՝ սոփոսձին, այս սինքն վատութիւնը:

Այսպէս ահա Հայը իր կրօնքին և քաղաքակրթութեան միացեալ ուժերուն շնորհիւ փրկած էր իր ազգայնութեան էութիւնը, ու հասած էր այն օրուան ուր այլ ես ուժասպառ կը գտնէր իր երկիրը աշխարհակալող ցեղը, մինչ ինք կորուստի կը մնար: Մեծ ապագայի մը նախազուր պիտի մտնէինք երբ ահա գէմերնիս կանգուն կը գտնենք հուժկու զօրութիւն մը որ հիւժեալ իսլամին տեղը մեզի ձգել չ'ուզեր, այլ ինք գրաւել: Մեր յիսուն դարու պատմութեան մէջ ահեղագոյն վտանգն է որուն կը հանդիպինք:

Երբ Ռուսը Հայաստանը գրաւէ, իր ետեւէն պիտի չբերէ իսլամին արշաւանքներուն ընկերացող երեք աղէտները: Ռուսական տիրապետութեան ներքեւ քրիստոնեայ Հայութիւնը ո՛չ պիտի ջարդուի, ո՛չ իր երկրէն տարագիր հեռանալու պիտի դատապարտուի, ո՛չ ալ անմիջական հաւատափոխութեան բռնադատութիւնը պիտի ծանրանայ իր վրայ: Բայց ինչպէս մեր պատմութիւնը կը հաստատէ, իսլամական շարիքները եթէ սաստկապէս

հարուածեցին մեր ազգայնութիւնը, չկրցան զայն մա-
հացնել. Ռուսիա տարբեր դրութեամբ մը կարճ ժա-
մանակամիջոցի մը մէջ ապահովապէս պիտի սպաննէ
Հայութիւնը: Ռուսական քաղաքակրթութիւնը որ հայ-
կականէն զերազանցօրէն հզօր է՝ մեզի իբր Հայ պիտի
փճացնէ: Հայ եկեղեցին որ իսլամութեան դէմ իսկ մեզի
քիչ շատ պաշտպանելու անկարող պիտի գտնուէր եթէ
չվայելէր ազգային քաղաքակրթութեան աջակցութիւնը,
ա՛յ միայնակ մնացած մեծագօր թշնամիի մը առջեւ՝ եւ
ոչ իսկ իբր խարխուղ պատուար մը պիտի կրնայ օգտակար
ըլլալ Հայութեան:

Չեմ ուզեր լոկ խորհրդածութիւններով հաստատել
այս հեռուոր ճշմարտութիւնը. փաստերս իրականութենէն
կ'անեն: Թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայոց կեանքերուն մի-
ջև զանուած տարբերութիւնը կրնայ հիմակուց որոշ գա-
ղափար մը տալ այն ապագային վրայ որ մեզի պիտի
վիճակուի երբ Հայաստանի մէջ թրքական տիրապետու-
թիւնը ուսականով փոխանակուի:



Երբ 1884ին առաջին անգամ Կովկաս անցայ, Հա-
յոց կենցաղավարութեան է՛ն ուշագրաւ երևոյթներէն մէկը
թուեցաւ ինձի հայ եւ ռուս լեզուներու բարգաւաճման մի-
ջավայրի տարբերութիւնը: Հայ ժողովրդին ուսում չըս-
տացող մասը իր մայրենի լեզուն կը խօսէր. ռուսականին
կողանը կը մնար զարգացեալ համարուող դասակարգը:
Տուները, խմբադատունները, ընկերական գումարում-
ներու մէջ, ամէն ուրեք ո՛ր եւ է գաղափարի արտայայտու-
թեան, նոյնիսկ ընթացիկ խօսակցութեան միջնորդը ռուս
բարբառն էր ընդհանրապէս: Վեց տարի ետքը կրկին Կով-
կաս վերադարձիս ինձի զգալի եղաւ թէ ռուս բարբառը այդ
կարճ ժամանակամիջոցին աւելի յառաջիմասճ էր: Երօրպա
ևս տեսայ թէ քիչ շատ ուսեալ երկու ռուսահայ իրարու հան-
դիպելով կամ իրարու հետ կենակցելով միշտ ռուսեվարին
սիրահարներն էին: Այս երևոյթը բնականաբար ինձի
անդրադարձնել պիտի տար այն հիմնական տարբերու-
թիւնը որ Թիւրքիոյ եւ Ռուսիոյ Հայոց մտքերը իրարմէ
կը զանազանէ: Պոլիս ալ հայ եւ թիւրք լեզուները ընթա-
ցիկ են. միայն թէ, ուսում չստացող Հայերն են որ պո-
լիս թիւրքերէնը կը գործածեն. իսկ կանոնաւորապէս զբա-
րոցէ անցած, զտրդացեալ երիտասարդները միշտ եւ ա-
մէն ուրեք հայերէն կը խօսին. թրքեվարին դիմումը զիպ-
ուածական բացառութիւն է: Չեմ յիշատակեր Հայաստան-
ցիները որոնց ամէնուն ալ բնական լեզուն հայկականն
է: Պոլսոյ եւ Թիֆլիսի Հայոց միջև այս հակադրութիւնը
կրնայ իբր ուղեցոյց օգտակար ըլլալ ռուսական քաղա-
քակրթութեան Հայոց վրայ ազդեցութիւնը ուսումնասի-
րել ուզողներուն:

Մեր զարգացումը ո՛րքան աւելի առաջանայ՝ մենք ալ
նոյն համեմատութեամբ կը հեռանանք Թիւրքերէն. Ռու-
սահայերը այնքան աւելի կը մերձենան իրենց վրայ տի-

րապետող՝ ցեղին որքան աւելի մտաւորական բարչաւա-
ճումի տիրանան: Թիւրք ցեղը մեզի իրեն քաշելու ո՛ր եւ է
հրապոյրէ զուրկ է: Ո՛չ գրականութիւն ունի, ո՛չ գեղ-
արուեստ, ո՛չ դիտութիւն: Ռուսը, կորովալիբ երիտա-
սարդ ցեղ, արդէն ստեղծած է տոհմային մեծ գրակա-
նութիւն մը, եւ իր զարգացման ընդարձակութեամբ ար-
ժանաւորապէս առաջնակարգ տեղ մը զրաւած բոլոր
քաղաքակիրթ ազգերուն մէջ. բնական է սրբմն որ ռու-
սական միտքը յափշտակիչ ազդեցութեամբ հզօրապէս
զրաւէ հայ ժողովրդին հետզհետէ զարգացող մասը:

Մեր Արեւելեան եւ Արևմտեան գրականութեանց ար-
դի վիճակին բաղդատական քննութիւնը կը հաստատէ
զուս հայկական մտքին յառաջացման դէմ ռուսական
քաղաքակրթութեան խափանարար արգելքը: Այս իրողու-
թեան իբր ապացոյց, նկատողութեան առնենք Պոլսոյ
եւ Թիֆլիսի պարբերական գրականութեանց փոխադարձ
կացութիւնը:

Կովկասի Հայերը մեր ըմբռնած առօրեայ թերթը
չունին: Միայն Մշակ է որ շաբաթը հինգ օր կը հրա-
տարակուի, եւ փոքրագիր: Ունին նաև եռօրեայ թերթ
մըն ալ. յետոյ՝ շաբաթաթերթ մը, Տարագը, եւ գրական
քաղաքական ամսահանդէս մը՝ Մոռքը, եւ կրօնական
ամսաթերթ մը՝ Արարատը: Ասոնցմէ Մշակը իր մօտ ե-
րեսնամեայ գոյութեամբը բաւական լաւ վիճակ ունի. Ա-
րարատը պաշտօնական է. միւսները նախանձելի կա-
ցութեան մէջ չեն: Թիւրքիոյ Հայերը ունին հայերէն լեզ-
ւով ամենօրեայ չորս մեծագիր օրաթերթ, չորս կամ հինգ
շաբաթաթերթ, մէկ ամսահանդէս, ամենքն ալ Թիֆլիսի
հրատարակութիւններէն շա՛տ աւելի լաւ նիւթական վի-
ճակ մը ունենալով:

Պարբերական հրատարակութեանց բարգաւաճմանը
համար Կովկաս Պոլսէն աւելի նպաստաւոր պայմաննե-
րու մէջ կը գտնուի: Գրաքննութիւնը հոն ալ կը հսկէ,
բայց մամուլին օրինական երաշխաւորութիւններ տրուած
են ընդդէմ վարչական քմահաճոյքին: Ժողովուրդը կէս
դարէ ի վեր շարունակ նախնական ու երկրորդական կըր-
թութիւն կը ստանայ, եւ բարձրագոյն ուսումով օժտուող-
ները կը կազմեն այնպիսի մեծկակ թիւ մը որուն վրայ
մենք գաղափար չունինք: Բարեկեցութիւնը ընդհանուր
է. փոխադրութեան միջոցներու շատութիւնը եւ կանոնա-
ւորութիւնը շատ դիւրութիւն կ'ընծայեն հրատարակու-
թեանց վաղընդփոյթ տարածման: Դրոշմի ջախջախիչ
տուրքը գոյութիւն չունի: Մեր մամուլը եթէ այս առաւե-
լութեանց մէկ մասը վայելէր՝ պիտի կրնար մեծ յառաջի-
մութիւն ընել: Ո՞ւսկից ուրեմն կովկասեան մամուլին այս յե-
տաձեռնացութիւնը, զոր եթէ ժողովրդին անընթերցասիրու-
թեանը վերագրենք կրնանք սխալիլ:

Կովկասի հայ մամուլին տկարացման առաջին պատ-
ճառը կը տեսնենք ռուս մամուլին գոյութեանը մէջ: Ռու-
սահայերը պետական լեզուն քաջ գիտեն, եւ հաճոյքով
կը կարդան ռուս թերթերը: Պոլիս ստկաւաթի բացառու-
թիւն են Թիւրքերէն օրագիր կարդացող Հայերը: Էեզուն

չենք զիտեր, ու թիրք մամուլը շատ ողորմելի խմբագրուած է: Կովկաս ոուս թերթերը մեծաքանակ կը տպուին, զի հասկնալի են երկրին այլազան բոլոր ցեղերուն, եւ տեղական պէտքերու համապատասխանող: Պոլիս ոչ որ կը մտաբերէ Հայու մը մահուան ծանուցումը թիրք թերթի մը հաղորդել, իսկ Կովկաս հարկ կը տեսնուի ոուս թերթերու մէջ ալ երեցնել Հայերու մահազոյրը: Այս օրինակ հրատարակութեանց պէտքը հետզհետէ սկսած է զգալի ըլլալ, ինչ որ նշան մըն է թէ Կովկասահայ գաղանազան ցեղերը կեանքի պահանջներով իրարու կը միանան ոուս լեզուին միջնորդութեամբը, եւ ի մի ձուլուելու կը պատրաստուին: Ռուս թերթերուն ընդարձակ տարածումը բնականաբար կը նպաստէ անոնց խմբագրութեան օրէ օր բարելաւացմանը, որմէն ընթերցողները աւելի կը հրապուրուին: Աւելցնենք որ Բեդրպուրի, Մոսկուայի մեծ թերթերը, որոնք տպագրական շատ ազատութիւնն եր կը վայելեն, ծաւալած են Կովկաս: Միևնոյն նկատողութիւնը կ'ընենք եւ հանդէսներուն համար այ: Ռուսերը մեծ հանդէսներ ունին որոնք երոպական նրամանօրինակ մեծ հրատարակութեանց կը հաւասարին, ոուսազէտ Հայերը անոնց մէջ լիստատ կը գտնեն իրենց մտքին պահանջներուն զոհացումը:

Ազգային հանրային կեանքին ոչնչացումը հաստոյր հարուածը եղաւ Կովկասահայ մամուլին զլխուն: Մըտքով պահ մը ջնջենք Պոլսոյ հայ մամուլին ազգային կեանքի պարունակութիւնը, շահեկան ինչ կը մնայ անդին հայ ընթերցողին համար: Որքան ատեն որ Կովկասի զբարոցները հայկական վարչութեամբ կը մատակարարուէին, Հայերն ալ զոնէ վարժարանին շուրջը կը գտնէին իրենց կեանքին հետ սերտ յարաբերութիւն ունեցող խնդիրները եւ անոնցմով կը հետաքրքրուէին: Այլ եւս դպրոցը իրենցը չէ: Նոյն իսկ եկեղեցիին շրջափակին մէջ ալ կաշկանդուած են: Եւ ոչ իսկ առաջնորդական խնդիր ունենալը ներելի է: Կաթողիկոսը Չարին վաւերացմանը կը ներկայացնէ երկու առաջնորդցու, վաւերացեալը պաշտօնին զուխը կ'անցնի, ժողովուրդը ձայն չունի: Քսան տարի է թիրքիոյ Հայոց խնդիրները առատ նիւթ մատակարարեցին Կովկասահայ մամուլին եւ վառ պահեցին ազգային ոգին: Հիմա այդ թուականն ալ փակուած կը համարինք՝ ոուսական ծրագիրներուն յարաճուն յաջողութեամբը: Անդին ինչ նիւթ կը մնայ որ ոուս մամուլին մէջ ընդարձակօրէն չգրուի:

Կովկասի տնտեսական, բարոյական, մտաւորական զարգացման բոլոր պայմանները համաքաղաքացիական են, այսինքն հայուն, վրացիին, ուսին, թիրքիին, չլրքէզին համար միևնոյնը: Համաքաղաքացիական են քաղաքային վարչական ժողովները, որոնց լեզուն ուսերէնն է միայն, թէ եւ ժողովին մեծամասնութիւնը, կամ նոյն իսկ ամբողջութիւնը հայեր կամ վրացիներ կազմեն: Համաքաղաքացիական են երկրին տնտեսական բարգաւաճման ստարոզ բոլոր ընկերութիւնները եւ հաստատութիւնները, սրբաբոյք են զիւղատնտեսական, զինեզոր-

ծական, շերամարածական ընկերութիւնները, հասաատ ուրիւնները, բազմաբուսեան զարոցները, արուեստանոցները, եւ այլն, եւ այլն: Համաքաղաքացիական են հիւանդանոցները: Ռուս՝ ամէնուն լեզուն, ոուս՝ ամէնուն ոգին:

Օսմանեան պետութեան մէջ իրաքաշիւր ցեղառանձինն ազգայնութիւն մը կը կազմէ իրեն յատուկ հիմնարկութիւններովը, որոնց կը ծառայեն իր լեզուն, օրագրութիւնը, գրականութիւնը: Մենք Հայերու մեր Սահմանադրութեամբը կէս ինքնավար ենք թէ՛ Պոլիս, թէ՛ Հայաստան, թէ՛ թիրքիոյ ամէն կողմը: Պատրիարքարաննիս պետութեան մէջ պետութիւն մըն է, ուստի եւ ազգային կեանքը միշտ կենդանի, միշտ վառ, միշտ հրաբորբոք, հակառակ ամէն հալածանքի եւ տառապանքի, ու լաւագոյն ապագայի մը ստուգութիւնը ապահովեալ է եւ թէ ոուսական վտանգը հեռանայ:

Թիրքիոյ մէջ թիրքերէնի գիտութիւնը անհրաժեշտ պայման մը չէ կեանքի պէտքերուն համար: Բազմաթիւ երոպացիներ իրենց գործերը կը տեսնեն առանց բառ մը գիտնալու պետական լեզուն: Երկրին վարչական կազմակերպութիւնը ամէն գիւրութիւն կ'ընծայէ անոնց որ առանց թիրքերէն գիտնալու ապրիլ կ'ուզեն: Վաճառականութիւնը գրեթէ պէտք չունի թիրքերէնի, Պոլիս շոգենաւային Շիրքէթը իր ժամանակացոյցերը շորս լեզուով կը հրատարակէ: շոգեկառքերու ընկերութիւնները օտար լեզունները թիրքերէնին կը կցեն. առևտրական դաշտարաններու առջև իսկ ֆրանսերէնը ընդունելի է: մինչ Ռուսիա ո՛ր եւ է մարդ ինչ ցեղի եւ կրօնքի ալ պատկանի իր օրինական երզումն անգամ ուսերէն լեզուով ընելու պարտական է: Ամենուս համար կը բաւէ, եւ շատ իսկ է, այն պարզ, հասարակ թիրքերէն խօսակցութիւնը զոր պզտիկուց կը սորվինք: Ո՛ր եւ է պարագայի համար աւելին պէտք ունեցողը կրնայ իրր մասնագիտութիւն սորվիլ: Իսկ Կովկաս պետական լեզուն օրէ օր անհրաժեշտ պայման մը կը դառնայ ապրիլ կարենալու համար: Ճարտարագործութիւն, վաճառականութիւն, դատաւարութիւն, ամենքն ալ ուսերէնի կը կարօտին: Երկաթուղիները որ օրէ օր կը բազմանան իրենց հետ կը սուրացնեն, երկրին էն խուլ անկիւնները թափանցել կուտան ոուս լեզուն: Չինուարագրութիւնը տասնհինգ տարի է մեծապէս կը ծառայէ հայ գեղերու մէջ ոուսական լեզուն տարածմանը:

Ժողովրդի մը լեզուն իր բնավայրին մէջ կարող է երկար ատեն, եւ մինչեւ իսկ մշտնջենապէս, զիմադրել արշաւող ցեղերու բերած բարբառին, եթէ այդ ցեղերը չեն ներկայացնիր քաղաքակրթիչ հզօրագոյն ուժ մը: Հինգ դար է թիրքերը նուաճած են Հայաստանը, բայց իրենց լեզուն միշտ օտարտի կը մնայ մեզի: Բուն հայրենիքին սահմաններէն դուրս, ժողովուրդ մը իր լեզուն դիւրութեամբ կը փոխէ: Հայը՝ Քաղապիա, Կեսարիա, Պոլիս թրքախօս եղաւ: Միևնոյն երկոյթը եւ Ռուսիոյ մէջ. Հայերը թիֆլիս նախ վրացախօս եղան, յետոյ ոուսախօս:

Բազու, Մասկուա, Բեդրգուրի Հայր աստուծոս է, ինչպէս Պետրոսապետի շատ կողմերը տակաւին թրքախօս: Իսկ Սոբարատեան նահանգին մէջ կը տիրապետէ Հայ լեզուն որ հետզհետէ տկարանալու վրայ է ուստական քաղաքակրթութեան հարուածներուն տակ: Դար մը չը բարձրած ուստական Հայաստանը պիտի մոռնայ հայկական բարբառը, և անոր հետ հայ աւանդութիւնները, հայ պատմութիւնը, Հայութիւնը: Նուաճումը անխօսափելի է: Անհնարին է որ այնքան այլազան ցեղեր իրենց ինքնութիւնը պահեն քաղաքակրթիչ հզօր ուժի մը առջեւ: Թրքազպատակ Հայաստանի մէջ ալ երբ մենք քաղաքական առանձնաշնորհումներ վայելենք, հակառակ մեր թիւին նուագութեանը՝ մենք ենք որ բոլոր ցեղերուն միութեան կեցողուն պիտի հանդիսանանք, վասն զի մենք քաղաքակրթութիւն մը կը ներկայացնենք:

Ինչ ապազայ վերապահուած է հայ մատենագրութեան, հայ Եկեղեցիին. բարոյական այս երկու գօրութիւնները պիտի կարենան սատարել Հայութեան պահպանումին: Այս նիւթին ըննութիւնը ուրիշ յօդուածի մը կը պահանջուի:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ՎԱՂՈՒԱՆ ՀՍՅԱՍՏԱՆԸ

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

Բժիշկ միսինար մը խարբերդէն զրելով սրբ տղոց ցաւերուն վրայ, կ'ըսէ. «Մանկական շատ քիչ բան կայ այս պզտիկներուն մէջ: Մեր որբերուն մէջ շատ յաճախ կը հանդիպինք ութ ինը տարեկան տղեկներու որոնք տարիքը առած մարդերու գաղափարները ու պատասխանատուութեան զգացումը ունենալ կը թուին: Օրինակի համար, պզտիկ մանչ մը, որ ուրախ ու հանդիստ էր որբանոցին մէջ, չկրցաւ մնալ այստեղ, որովհետեւ կը զգար թէ պարտաւոր էր իր պառաւ մեծ մայրը խնամելու. ու այդ պզտիկը ութ տարեկան էր միայն: Ութ ինը տարեկան ուրիշ մանչեր ու աղջիկներ իրենց պզտիկ եղբայրներն ու քոյրերը որբանոցը բերած են եւ անոնց հոգ կը տանին իր բրկու տարիէ ի վեր: Որբանոցին տղաքը յաճախ թողտուութիւն խնայած են կերակուր չուտելու, որպէս զի այդ կերպով խնայուած ուտելիքը թշուառներուն տրուի. եւ տառապողներուն համար իրենց համակրութիւնը այնքան մեծ է որ մէկ քանի օր իրարու վրայ առտուընէ մինչեւ իրիկուն մէկ անգամ միայն կերակուր կերած են, ու այդ կերակուրը՝ լոկ բրինձ կա՛մ հաց ու ցորեն էր:»

Տր. Ուշըր սրտառուչ պատմութիւնը կ'ընէ խեղճ որբի մը մահուանը.

«Խեղճ պզտիկը ութ օր է որ որբանոցը մտած էր: Եկած օրը, որբանոցին մայրը զինքը լուաց ու մաքուր ըզգեսաներ սուաւ իրեն: Խեղճ պզտիկ ձագուկը այսպիսի հոգածութեան վարժուած չէր, ու ետքէն միւս տղաքներուն հետ խօսած ատենը կ'ըսէր. «Աս ի՛նչ բան է, իր ձեռքովը լուաց իս, ու աս հագուստները սուաւ: Վաղը ծով պիտի պահանջուի Աստուծոյ փառք տալու համար:» Իրաւ ալ ծով պահեց, ու աղաչեց որ իր կերակուրը աղքատներուն տրուի: Յետոյ զարձեալ, կիրակի օրը, խնդրեց որ ծով պահէ և իր կերակուրը նորէն աղքատներուն տրուի: Երկուշաբթի օր պաղ առած էր, բայց վիճակը ծանր չնկատելով՝ շիմացուցին ինձի, թէպէտ որբանոցն էի: Երեքշաբթի առու շնչառութիւնը յանկարծ դժուարացաւ, եւ խոչահատութեամբ օգնութեան չհասած՝ խեղճ պզտիկը հոգին աւանդեց: Ազնիւ, արթուն մանչ մըն էր, ու շատ բան կը խոստանար:»

«Քչիէն երկու պզտիկ ելան խարբերդ եկան, կը զրէ՛ Տր, Պարնըմ, ու աղաչեցին որ զիրենք որբանոցը ընդունիմ: Ո՛չ հայր ունին ո՛չ մայր: Անձկութեամբ երեսս ի վեր կը նային: Իրենցմէ մին կ'ըսէ. «Տարի մը միայն իս ընդունէ որպէս զի կարգալ սորվիմ եւ մարդ ըլլամ: Մինչեւ որ կարգալ գրել չսորվիմ, մարդ չեմ ըլլար: Այդ տարուան միջոցին կրնամ նաև կոշիկ նորել սորվիլ, ու ան ատեն ինքզինքս կրնամ ապրեցնել:» Երրորդ մանչ մը մօտը կեցած է, իր տրտում ձօրը հետ: Տգոյն ու նիհար է, բայց ան ինչ սրտառուչ նայուածք մը կայ իր վառ աչքերուն մէջ: Որբանոցին մէջ չափէն աւելի խոնուած ենք, բայց ինչպէս կրնանք մերժել այդ ձագուկները, զորոնք այնքան խոստմալից են, ու ինչպէս զանոնք զրկենք նորէն փողոցները՝ մուրացկանի կեանք վարելու:»

* * *

Խեղճ պառաւ կին մը, պատառած հագուստներով, կորաքամակ, Քչիէն քալելով ելած խարբերդ եկած է, հարիւր մղոնի ճամբայ: Ինք ու իր աղջիկ թուր տըժգոյն սու տկար են, որովհետեւ մեծ թշուառութիւն կը տիրէ Քչիի կողմերը եւ շատեր արմատներով ու խոտեղէններով կ'ապրին, ոմանք նոյն իսկ դալար խոտ ուտելով:

Մեծ մայրը ա՛լ կարող չէ պզտիկ աղջիկը պահել: Ծատ ծեր է, ու շատ տկար: Չանի առած խարբերդ բերած է. թերևս միսինարները զթան որբուկին, որուն հայրն ու մայրը ջարդին ատեն սպաննուած են:

Միսինարներուն շէնքին դուր ասի կ'առնեն, ու մինչգն պառաւը իր խնդրեքը կը բացատրէ տիկին Պարնըմի, աղջիկը կ'առնեն Տր. Պարնըմի գրասենեակը կը տանին որ ըննուի:

— Խա՛թուն, սէ՛ր իմ խաթուն, կ'ըսէ պառաւը, անցած տարի մանչ թոռս որբանոցը ընդունեցաք: Կը կարծէի որ պզտիկ աղջիկն ալ պիտի կրնայի ես նայիլ. բայց

վրաս կարողութիւն շնաց, ցորեն չի կայ, հունձք չե-
ղաւ: Աշխատանք չեմ կրնար գտնել, պառաւ եմ, հիւանդ
եմ: Ի սէր Աստուծոյ, կ'աղաչեմ, աղջիկս առէք ու նայե-
ցէք: Հայրն ու մայրը կեանքերնին զոհեցին, Գրիստոսնին
չուրանալու համար: Քրիստոս պիտի վարձատրէ ձեզի:
կ'աղաչեմ, ընդունեցէք աղջիկը:

Վերը, Տր. Պարնըմի գրասենեակին մէջ, քննութիւնը
տեղի կ'ունենայ:

—Քանի տարեկան ես, ո՞ր գեղէն ես:

Եւ այն եւ այն:

—Կարգալ գիտե՞ս. (տարակուսական կերպով մը, ու-
րովհետեւ վարժարան չի կայ իրենց գեղին մէջ):

—Օ՛, այո՛, կրնամ Աւետարան կարգալ:

—Ի՞նչպէս եղեր է որ կարգալ սորվեր ես:

—Մայրս սորվեցուց ինձի, ինքն ալ եղբորմէն ոոր-
վեր կր պզտիկութեանը:

Ասիկա կը նպաստէ աղջկանը ընդունուելուն, ու սան-
դուիներէն վար կը վազէ ծափ զարնելով, աւետիտը տա-
լու համար մեծ ձորը, որ կուգայ լալագին աչքերով Տր.
Պարնըմի ձեռքերը պահնելու, Աստուծոյ օրհնենքը հայ-
ցելով որբերուն հոգ տանողներուն վրայ:

* * *

Ուրֆայէն, Միս Գորիննա Շտղըք, որ, ամէնուն
խոստովանութեամբ, զիւցազնուհիի գործ մը կը կատարէ
հոն, կը գրէ.

«Մեր տղոց զարգացումը մեծ ուրախութիւն կը պատ-
ճառէ մեզի: Հրաշալի կերպով կ'աճին կոր, ոմանք իմ
հասակիս կը հասնին: Մտաւորականը ու հոգեկանը՝
Ֆիզիքականէն վար չեն մնար: Դժուար է աղջիկ մեծցնելը
այս քաղաքին մէջ, ուր լաւագոյն ծնողքները անգամ ի-
րենց աղջիկներն կը նշանեն 11 ու 12 տարուան եղած
ատեններն. հետեւաբար, այդ մասին ալ առիթ ունինք բար-
քերուն վրայ ազդելու:»

Վանէն Տր. Բէյնուլտզ կը գրէ, փետրուար 23 թը-
ւականով, Անգլիոյ կանանց Հայկական Նպաստամատոյց
Ցանձնաժողովին քարտուղարին.

«Կրնաք ապահով ըլլալ թէ մեզի օգնելու համար
ձեր ըրած բոլոր ջանքերը մեծապէս կը գնահատուին, եւ
եթէ նպաստի գործը ա՛լ աւելի շընդարձակուիր կոր՝ ա-
տիկա զարմանալի չէ երբոր նկատենք այն բազմաթիւ եւ
յոյժ ստիպողական զիմուսները որոնք հիմա կ'ուղղուին
անգլիական հասարակութեան, և երբոր նկատենք նաեւ
թէ ահա տարիներ եղաւ որ Հայերը օգնութիւն կը խնդրեն:
Եւ սակայն սա ճշմարիտ է որ մեր չորս բոլորքը գտնուող
խեղճերը բոլորովին սովամահ են, և մենք զանոնք փրկե-
լու միջոցները չունինք: Ընդհանուր նպաստի համար
եկած գումարները հազիւ թէ կը բաւեն կանգուն պահե-
լու մեր երկար ատենէ ի վեր սկսած ձեռնարկները (ար-
հեստանոց եւ որբանոց), եւ ուրիշ բանի նայելու միջոց
չունինք: Օր չ'անցնիր որ մեր ուշադրութիւնը չհրաւիրեն

այս ու այն գեղին խղճալի կացութեանը վրայ, հաւաստե-
լով թէ գեղացիները արդէն անօթութենէ կը մեռնին կոր,
մինչ շատեր ալ կմախք դարձած են և անկողին ինկած
անունդի պակասութենէ: Այս տեղեկութիւնները շատ ան-
գամ կը քաղենք մեր իսկ տղաքներէն որոնք ելած գացած
են իբր ուսուցիչ, և իրենց հայրենի գիւղերուն վրայօք
լուր կուտան միշտ մեզի: Այդ տղաքներէն մին վերջերս
այցելութեան եկաւ եւ ահա ի՛նչ պատմեց իր գեղին
մասին.

«Գեղը 286 բնակիչ ունի, որոնց 130ը ապրելու ո
և է միջոցէ զուրկ են (ասոնց 18ը որբ և 3ը որեւայրի):
Երեք հոգի անօթութենէ մեռած են, և 30-40 հոգի ալ
կմախք դարձած են: Կին մը իր զուակը սպաննեց եւ
փորձեց անձնասպան ըլլալ:»

Այս վարժապետին ուրիշ բան չկրցայ ըսել բայց եթէ
սա թէ անցեալ դարնան բաշխուած սերմնցուէն քաղուած
ցորենը արդէն ոպառած ըլլալով, ուրիշ բան չէի կրնար
ընել բայց եթէ այդ տեղեկութիւնը արձանագրելով շա-
տանալ: Վարժապետը գեղը դարձաւ, բայց քիչ ետքը
բարեկամ մը զրկեց՝ կացութեան վրայ հրաւիրելու հա-
մար ուշադրութիւնս, ըսելով թէ իր աշակերտներէն շատը
ստիպուած են դպրոցը թողուլ, և թէ իր ոտքերը ինչալով
կը պաղատին որ միջոց մը գտնէ իրենց օգնութեան
հասնելու:

Մեր վարժապետներէն մէկը անցեալ կիրակի իրի-
կուն մեր մանչ որբերուն սովորական գումարման ատեն
անոնց հաղորդեց այս լուրը, եւ յայտնեց թէ օգնութեան
հասնելու միջոց մը չունենալով, լոկ պիտի աղօթէին
անոնց համար: Ան ատեն իրենց հարցուցի թէ իրաւցնէ
կ'ուզէին օգնել այդ տղաքներուն, ու պատասխանեցին
այո՛:

— Պատրա՛ստ էք զօհողութիւն ընել ատոր համար.

— Այո՛ (եռանդագին):

— Կ'ուզէ՞ք վաղը ձեր մէկ ճաշէն զրկուիլ, եւ ատ-
կից ինչ որ գոյանայ՝ այդ խեղճ տղաքներուն զրկել:

Ու իրենց բացատրեցի թէ ատիկա ճշմարիտ զօհո-
ղութիւն մը կը պահանջէր, թէ քուէարկելէ առաջ մտա-
ծելու էին. բայց վերջապէս, անոնք որ իրօք յօժար էին
այդպէս ընելու՝ ձեռուրնին վեր վերցնելու էին:

Տեսնելու էիք խանդավառութիւնը որով այդ 300
ձեռքերը վեր բարձրացան, շատերը իրենց երկու ձեռ-
քը մէկէն վեր բարձրացնելով որչափ որ կրնային: Նոյն
բանը ընել տուի 200 որբուհիներուն ալ, և անոնք ալ
միաբերան ընդունելով, հետեւալ օրը նախաճաշ չտրուե-
ցաւ, և ատոր արժէքով ալիւր զրկուեցաւ անմիջապէս
անօթիներուն: Մենք միսիոնարներս ալ մէկ մէկ մէծի-
տիէ տալով ցորեն գնեցինք, այնպէս որ մէկ քանի օր-
ուան պաշար զրկուեցաւ այդ գեղը: Բայց ի՛նչ կ'ըլլայ
մէկ գեղով...:

Կը հարցնէք թէ կառավարութիւնը ցորեն բաշխե՞ց
գեղացիներուն, ինչպէս խոսաացած էր: Յաւ ի սիրտ
կ'ըսեմ թէ փոխանակ այդպիսի օգնութեան մը, երեք

տարուան բարգուաճ տուրքերը հիմակ անխնայ կը պահանջուին սովալլուկ ժողովրդէն։»

* * *

Ակնէն կը գրեն.

«Այս քաղաքին մէջ, ուր շարդերէն յետոյ շատ քիչ կրիկմարդ մնացած է, գլխաւոր արհեստն է կապերտ գործել, ու ասիկա կիներուն ու տղշիկներուն գլխաւոր զբաղումն է: Ակնայ աղշիկներէն ոմանք արհեստը այնքան լաւ սորված են որ հիմակ որբերուն սորվեցնելու վիճակին մէջն են, ու այդպէս ապրուստին պիտի վաստկին: Երկուրը կը պատրաստուին Մալաթիա երթալ՝ տեղին աղշկանց որբանոցին մէջ այդ արհեստը մտցնելու համար: Երիտասարդներ կը սկսին մեր աղշիկները կնութեան ինչորել, ու մենք կը հաւատանք թէ երկրին մէջ չկան աղշիկներ որ աւելի լաւագոյն ամուսիններ կարենան ըլլալ քան մեծամասնութիւնը անոնց որ հիմա կը կըրթուին այս որբանոցներուն եւ վարժարաններուն մէջ:»

Բաղէշէն Միս Շարլօզ էլի կը գրէ.

«Գրիչը շիրնար նկարագրել խղճալի կացութիւնը այն հէզ պզտիկ թափառական որբերուն, որոնք վտանգաւոր թաքստոցներու մէջ կը պահուուին, կամ, անօթութեանն մղուած, փողոցները մուրալու ապականիչ հարկին մատնուած կին: Հիմակ այդ տղաքները հաւաքուած են ու լաւ ազգեցութեանց տակ կը գտնուին, իրենց մատաղ սրտերը ատոնցմէ կ'օգտուին այնպիսի եղանակով մը որ մեծապէս խրախուսական է զիրենք կրթող ու հրահանգող ու խնամող ուսուցիչներուն համար:

«Անցեալ տարի տղաքներէն երկուրը ճամբուեցան, մին՝ հայր ունենալուն, և միւրը՝ իր անուղղայ վարժուցիչին համար: Չորս տղայ մեռան, երկուրը՝ շարգերուն ատեն անտուն անտընուչ թափառելուն և սարսափին հետեանքներէն: Աղշիկներուն մահը՝ բժիշկին կողմէ կը վերագրուի երկար ատենուան զրկումներու և անբաւական սնունդի:

«Տարեկան քննութեան ատեն, տղոց ըրած յառաջդիմութիւնը շատ դնահատուեցաւ հիւրերէն: Տր. Գոլ այցելեց Մուշի մօտ Սասունեան որբանոցը, և տեսաւ որ զործը շատ լաւ առաջ կ'երթար ու աղէկ արդիւնք կը խոստանար:»

Մարգուանէն տիկին Թրէյսի կը գրէ.

«Պզտիկ մանչերը շատ ուրախ են հիմակ, աշխատութեամբ, զպրօցով ու խաղով զբաղած: Մանչերէն 16ը կօշկակարութիւն կ'ընեն, պզտիկ գերձակները նոր վարպետի մը կը սպասեն, երկուրը կազմարար ըլլալու վերայ են, և անոնք որոնց տարիքը կը ներէ՝ որբանոցին ներքին գործերը կ'ընեն, ալել, փռշիները առնել, սեղան դնել, աման լուալ, լամպարները մաքրել լեցնել կայն կայն: Զբօսնելու համար, թուրքիներ կը շինեն և գաշտերը կ'երթան թոցնելու, տուներ կը շինեն ու մեծ աշխատութիւն կը թափեն այդ գործին վրայ, շաղախ ու ծեփ զարնելով անոնց: Աղիւտի կառններէ փուտեր կը

շինեն, որոնց մէջ պզտիկ նկանակներ կ'ընան եփել. սայլակներ կը շինեն, ու աղեղներ, նետեր, զանգակներ: Իրենց խաղալիքները իրենք կը շինեն:

«Ուսման մէջ ալ յաջող են: Մեծ հաճոյք կը զգամ հիւրեր բերելով դասարանները՝ տղաքները տեսնելու, և անոնց ցուցնելով մաքուր գրուած տետրակները եւ անգլիերէն, թիւրքերէն և հայերէն գեղադրութիւնները, ինչպէս նաև իրենց գծադրութեան տետրակները: Ութսունը հինգ մանչ ունինք, ամենքն ալ մանուկ, ու շատ արթնամալ:

«Աղշիկները 60 հատ են և տիկին Գարինկընի խնամքին յանձնուած են: Իրենց զպրօցը ունին եւ իրենց արհեստանոցը: Անցեալ տարի իրենք իրենց ձեռքովը հիւսեցին իրենց հագուստները ու գոգնոցները և մանչերուն որբանոցին մէջ գործածուած բոլոր կտուր, բացի ձմրան համար բրդեղէն գգեստներէ: Մանչերը բուրն ալ արհեստ մը պիտի սորվին հաւանօրէն, եւ էն խելացիները վարժապետ ըլլան թերևս: Աղշիկներէն ութը Ամերիկա բարեկամներու կողմէ որդեգրուած են և գիշերօթիկ վարժարանը դրուած՝ վարժուհի ըլլալու համար:»

* * *

Տիարպէքիւրէն կը գրեն.

«Քաղաքիս զերմանական երկսեռ որբանոցը, որ երկու անգամ փակուեցաւ ու բացուեցաւ, հինգ-վեց ամսէ ի վեր վերջնապէս փակուած կը մնայ: Որբերը զօրս հանուեցան, ու այս ձին ձմրան փողոցները կը թափառին անտէր անօթի: Որբանոցին զերմանացի տնօրէնը, ալ ճարահատած կուսակալին մեքենայութիւններէն, սկսած է որբանոցին գոյքերը ծախել ու կը պատրաստուի քաղքէտ հետնալ:

«Ամերիկեան երկսեռ որբանոցը, Պատ. Յակոբ Անտօյեանի տնօրէնութեան ներքև, կը շարունակուի: 140 որբերը Ս. Կիրակոս եկեղեցիին ազգային վարժարաններուն մէջ կ'ուսանին մինչեւ իրիկուն: Կաղնիին իրիկունը փառաւոր լօլէ մը ըրին որբերն ու որբուհիները. Տիարպէքիւրի քաղցրեղէնները, 20 տեսակէ աւելի. տաշտերով լեցուած դրուած կին սրահին մէջ տեղը, 100է աւելի ճրագներով զարդարուած: Առաջնորդական տեղապահ Տ. Եզեկիէլ վարդապետ աղօթքով մը բացաւ հանդէսը. որբերը երգեցին, արտասանութիւններ ըրին կայն: Պատ. Անտօյեան եւ կինը կը հսկին հանդէսին կարգադրութեանը: Տ. Եզեկիէլ վարդապետին հետ ներկայ էին նաև Ազգ. Որբանոցին հոգաբարձութիւնը, եւ այլն, ինչպէս նաև պատուելիին համակրող բողոքական եղբայրներէն ոմանք, վասն զի տեղիս բողոքականներուն ազգապետը, վարժապետը, քարոզիչ Պատ. Թովմաս եւ ասոնց կուսակիցները գտնուած են Պատ. Անտօյեանի հետ՝ որբերը Հայոց եկեղեցին եւ վարժարանը զրկելուն համար:

«Նոյնպէս փառաւոր լօլէ մը ըրին Ազգ. Որբանոցին

40 որբերը: Հոս ալ պատրաստուած սեղանը պզտիկ- ներուն բերնին շուրբը կը վազցնէր: Տախտակէ մեծ սեղանի մը վրայ 40 ամաններ շարուած էին ամէն տե- սակ քաղցրեղէններով լեցուն և մոմերով զարդարուած, որոնք որբերուն բաժնուեցան: Տ. Եզեկիէ վարդապետ այստեղ ալ ներկայ էր: Երգ, աւտասանութիւն, խրատ, օրհնանք, բան մը պակաս չէր: Այս որբերն ալ Ս. Կի- րակոս եկեղեցին կ'ուսանին:

«Մոսկուայէն Պ. Գրիգոր Զանչեանց 600 ոսկի յատ- կացուցած է Տիարպէքերի Ազգ Որբանոցին մինչև վեց տարի: Վերջերս Որբանոցին լուսանկարը ուզած էր Պատ- րիարքին միջոցաւ. հանուեցաւ և իրեն զրկուեցաւ, որպէս զի տեսնէ իր որբուկները:

«Քաղաքիս հայ կարօտեալներուն ալիւր եւ ածուխ կը բաժնուի այս ձեռն ալ Պատրիարքարանէն զրկուած նը- պաստովը: Ծնունդի ճրագալոյցին օրը, 20 խոշոր պը- դինձ հերիսայ եփուելով բաժնուեցաւ նպաստը կախներուն, որոնց թիւը 2000ը կ'անցնի: Այդ տօնական հերիսային համար գործածուեցաւ 500 զրուշի ծեծած (2 շարեկ), 325 զրուշի արդար իւղ (7 լիտր), 1 ու կէս օխա քիմիոն, 3 նուկի շաման և 4 խանթար վառելափայտ:

«Այդ կարօտեալներուն մէջ շատ հիւանդներ կան, ո- րոնց զեղերը եկեղեցիէն կը հոգացուին ամէն ամիս 100-150 զրուշի չափ:»

ՊՐՕՊԱԳԱՆԴԻՍԸ

(Շարունակութիւն)

Բ.

Աշոտ հետզհետէ քայլերը արագելով ուղղուեցաւ դէ- ի Ղ լսիւր, թիւնէլին կայարանը. Ներս մտնելու վրայ էր երբ մէկը ուսին զարկաւ գոչելով.

— Ո՛ր կը վազեօ ասանկ:

Աշոտ զուլը դարձուց: Մարտիկն էր, իր կազմած «Պատուհաս» խմբին անդամներէն մէկը, անգործ երիտա- սարգ մը որ ամէն օր Ղալաթայի հրապարակը կը շրջէր, պորտային, կամուրջին, թրանվայի ճամբուն երկայնքը, այս կերպով ինքզինքին գործ ունեցող մէկու մը զգայ- նութիւնները տալու համար: Օրուան մեծ մասը կ'ան- ցընէր պորտան, իրեն ծանօթ հայ միջնորդներու գրա- սենեակները, վիճելով արժէթուղթներու հաւանական ելուէլին մասին, քաղաքականութեան առած ամենավեր- ջին երեւոյթներուն համեմատ: Ամէն առտու գիւղէն կ'իջ- նար ըննսոյխ խաղալու հաստատ մտադրութեամբ ու իրիկունը կը վերադառնար առանց իր մտադրութիւնը գոր- ծադրած ըլլալու: Հօրենական մանր մունր կալուածներ

իր ապրուստը կ'ապահովէին. ասիկէ զատ ձեռքին տակ ունէր քանի մը հարիւր ոսկի պատրաստ դրամ զոր արգա- սաբեր կերպով շահագործելու միջոցներուն վրայ տարի- ներէ ի վեր կը խորհէր: Եթէ օրուան մէջ ըննսոյխը անկում մը կրէր, Մարտիկ՝ «Այսօր քանի մը հազար հատ ծախելու է եղեր» կը մտածէր, շոգենաւին ճամբան ձեռք առնելով. իսկ հակառակ պարագային՝ «Այսօր քանի մը հազար հատ առնելու է եղեր» կը խորհէր: Իր ամբողջ գործունէութիւնը իրիկնամուտի այս անխուսա- փելի խորհրդածութեան մէջ կ'ամփոփուէր: Եւ սակայն Ղալաթայի եռուզեռ, տենդային կեանքը որուն մէջ կ'ապ- րէր, գործի վրայ եղող մարդու մը պատրանքը այնքան ուժգնօրէն կ'ազդէր իրեն որ ա՛լ իր անգործութեան զի- տակցութիւնը կորսնցուցած էր բոլորովին: Իրեն հետ իր բարեկամներն ալ կը կարծէին թէ Մարտիկ զուլը բերե- լու ժամանակ չունէր, և այդ կարծիքն էր որ Աշոտը դրդած էր իր նորակազմ խմբին մէջ առնելու զայն:

— Իրեն պէս գործի մարդ մը մեծ օգտակարութիւն կրնայ ունենալ մեզի համար, մտածե՛ր էր.

Աշոտ շատ գոհ եղաւ Մարտիկին հանդիպելով թի- նէլին մուտքին առջև.

— Բերա պիտի ելլեմ, եկուր միասին... կարելոր բա- ներ կան, ըսաւ վերջի բառերը ստորագծելով:

— Ճիշդ այս վայրկեանիս անհրաժեշտ ժամադրութիւն մը ունիմ սա զիմացի խանութը. անպատճառ պէտք է որ գտնուիմ, կը սպասեն կոր, հետեւաբար... բայց կեցի՛ր, քանի որ կարելոր բաներ ունիս ըսելիք, երթամ ու դառ- նամ... վայրկեանէ մը հոս եմ, սպասէ ինձի:

Ու Մարտիկ բաժնուեցաւ իր բարեկամէն: Իր յատ- կանիշներէն մէկն էր ուրիշին կարելոր նկատած մէկ գոր- ծը կերպով մը վարկաբեկ ընել՝ իրեն վերաբերող մէկ կարե- լորագոյն գործին յանկարծական յայտնութեամբը:

Ինչ որ «զիմացի խանութին մէջ անհրաժեշտ ժամա- դրութիւն» կ'անուանէր, նորոգուելու տրուած հին շա- պիկներու մասին կարգադրութիւն մըն էր խանութի աշկեր- ատի հետ:

Ի՛նչ մը ետքը վերադարձաւ:

— Գործս տեսայ, ա՛լ ազատ եմ, երթանք, գոչեց: Երբ Բերա ելան, Աշոտ բարեկամին թեւը մտնելով ըսաւ.

— Այսօր ժողով ըրինք:

— Է՛յ...

— Վերջնականապէս որոշեցինք... երկու ամիսէն պի- տի ընենք:

— Ի՛նչ կ'ըսես:

— Այո՛, անդառնալի կերպով վճռուած է: Ամէն բան խորհեցանք, ամէն կարգադրութիւն ըրինք ու վաղուընէ գործի պիտի սկսինք... ես հիմա Բերա ելայ Պոլսոյ և շըր- ջականներուն մէկ ընդարձակ քառքը գտնելու համար: Արդեօք Վայսին ըով կ'այ:

— Կը յուսամ. երթանք նայինք: Երկու բարեկամները ուղղուեցան զրազմառին խա-

նութը, իրենց փնտռածը գտան ու դուրս ելլելով դացին ոռուական դեպքնատան դիմացը, գարեջրատուն մը:

—Մ՛օ աս շատ մեծ բան է, եթէ յաջողի, մրմոաց Մարտիկ իր բարեկամին, որ անդրդուելի հաստատա- մտութեամբ պատասխանեց:

—Պիտի յաջողի, վստահ եղիր, քանի որ Կուլտամ- եանցի պէս մէկը ունինք մեր վրայ:

—Ատ մարդն ալ մէյ մը չտեսայ:

—Այս օրերս պիտի տեսնաս... նշանաւոր բան է:

—Դէպքը ըլլալէն օր մը առաջ ծախելու է, խօսք չի կայ... երեք շորս դրուշ մէկէն պիտի իյնայ քոնսոլիտը, ըսաւ Մարտիկ գաւաթը պարպելով:

—Ի՛նչ զարմանալի մարդ ես, եղբայր, գոչեց Աշոտ խնդալով, ասանկ պարագայի մը նորէն գործի վրայ կը մտածես: Բոլորովին դրական մարդ մըն ես, գո՛րծ, գո՛րծ... Անգլիացի ծնելու էիր:

—Է՛հ, ազգասիրութիւնն ալ դրամով կ'ըլլայ... մա- նաւանդ որ ես հայրենասիրութիւնը գործերուս չեմ գտնէր. ա՛ն ալ կ'ընեմ, ա՛ն ալ...

—Ատ իրաւ է. ճիշդ հոս է քու արժանիքդ, զօրաւոր նկարագրի տէր մարդ մըն ես:

—Պէտք է այնպէս ըլլալ:

—Քեզ ելմտական նախարար պիտի ընենք:

—Իշալահ:

—Հա՛, գիտե՛ս, մեր խումբը մինչեւ երկու ամիս ե- րեք հարիւր ոսկի պիտի ժողվէ ու տայ կեդրոնական Կու- միտէին. . . ասանկ վճոցեցինք այսօրուան ժողովին մէջ:

—Երեք հարիւր, ըսաւ Մարտիկ ականջը բերելով:

—Այո՛, ամբողջ դրամները պէտք է նախապէս Կուլ- տամեանցի տրամադրութեան տակ գտնուին: Ինչ որ է, ետքը մեր ընկերներով կը խորհինք այս մասին:

Երկու բարեկամները դուրս ելան գարեջրատունէն եւ դէպի թիւնէլ ուղղուեցան: Հիմակ երկուքն ալ լուռ կը քա- լէին, ճնշուած, ջախջախուած, երկու ամիս ետքը գոր- ծագրուելիք ահեղ ծրագրին մտածման տակ:

Ամիսներ առաջ, օր մը, Կուլտամեանց խօսակցու- թեան մը ատեն ըսած էր իր Կոմիտէի ընկերներուն.— «Տղե՛րք, ինձ համար շատ հեշտ է Պոլսոյ տիրանալ քա- ոասուն հոգու մի խմբով:»

—Ի՛նչպէս, գոչած էին իր ընկերները շեշտով մը ուր հիացումը կը գօտեմարտէր կասկածանքին հետ:

—Ա՛, դա իմ գաղտնիքն է. երբ ժամանակը գայ այն ատեն կ'իմանաք ու կը տեսնէք, պատասխանած էր Կուլ- տամեանց ձեռով մը որ կասկածանքին յետոյքին տրուած ոտքի մագիստրոսական հարուած մըն էր պարզապէս:

Յետոյ, կամաց կամաց, օդին մէջ նետուած այն ա- նորոշ, միգամաձային խորհուրդը խտացեր, կազմուեր, պաղեր ու որոշ ձեւ մը առեր էր: Այո՛, քառասուն հոգիով Պոլիսին պիտի տիրանար Կուլտամեանց: Ամէն գժուա- բութիւն, ամէն խոչընդոտ հարթուած կը. անակնկալ յան- կարծահաս պատահարները կշռուած, զատուած ու դա- ապարտուած էին:

—Նաբուէնն մըն է աս մարդը, կ'ըսէր Աշոտ, ամէն անգամ որ Կուլտամեանց նոր մանրամասնութիւններով կը բացատրէր իր ծրագիրը:

Ու իր հիացման, խանդավառութեան մէջ մուրրած, անդիմադրելի պէտք մը զգացեր էր գաղտնիքը հաղոր- դելու «Պատուհաս» խմբին ամէնէն բանիմաց ընկերներուն, որոնց գտնէն էր Մարտիկ:

—Վսե՛մ գաղափար, գոչեր էր Մարտիկ, բայց ան- կարելի...

—Անկարելի՞... իս մտիկ ըրէ՛:

Եւ Աշոտ երկար բարակ պարզած էր ուղղական բոլոր այն միջոցները գործնք Կուլտամեանց երեւակայած էր:

—Ըլլայ նէ աղէկ, սքանչելի՞ բան, պատասխաներ էր վերջապէս Մարտիկ իր անհաւատութեան մէջ քիչ մը խախտած. ու յետոյ իր սիրական մտալլկուովին դար- ձած՝

—Ատ օրը ծախելու է, տասը, քսան, երեսուն հա- զար հատ ծախելու է:

Այսօր, կեդրոնական Կոմիտէի վերջնական որոշու- մէն ետքը, ժամանակը եկած էր խմբին ամբողջ ընկեր- ներուն ալ իմաց տալու գաղտնիքը:

—Այս իրիկուն իսկ ժողովուինք ու խօսքը բանանք, ըսաւ Աշոտ երբ իրենց գեղի նաւամատոյցը ելան:

Երկու բարեկամները որոշեցին որ Մարտիկի տունը ըլլայ գումարումը եւ իրարմէ բաժնուեցան:

—Բար՛ իրիկուն, միւսիւ Աշոտ, լսուեցաւ հնչուն ձայն մը ծովեզերեայ զբօսարանէն, երբ դաստուն մի- նակ մնացած, կը պատրաստուէր տանը ձամբան ձեռք աննելու:

Աշոտ զլուխը դարձուց եւ տեսաւ զպրոցի կառա- վարչին գոհ, գիրուկ, կարմրուկ, միամիտ ու պայծառ դէմքը:

—Վ՛այ, հօ՛ս ես եղեր:

—Հապա՛, շոգնաւէն ելլելուդ կը սպասեմ կոր. նայէ՛ դեռ մաստիքաս կեցեր է որպէս զի քեզի հետ խմեմ:

Ու կառավարիչը ցոյց տուաւ գերագոյն զոհաբերու- թեան և ընկերական սիրոյ խաչելութեան խորհրդապատ- կերը, մաստիքայի լեցուն գաւաթը:

Երկու բարեկամները գացին առանձին անկիւն մը տեղաւորուեցան:

—Ի՛նչ կայ, մտմտո՞ւք մը ունիս, հարցուց զպրոցի կառավարիչը Աշոտին լուրջ ու լուռ կերպարանքէն ազ- դուելով:

—Ծանր խնդիրներ կան, շատ ծանր, պատասխա- նեց զառատուն: Այսօր ժողով ըրինք եւ որոշումներ տը- լինք, որոշումներ որոնցմէ կախուած է մեր ամենուս կեանքը...

Կառավարչին պայծառ ու զուարթ դէմքը մթազնե- ցաւ: Օդիին գաւաթը որ չրթունքներուն մօտեցուցած էր, յանկարծ ետ քաշեց, սեղանին վրայ դրաւ ու իր բարեկամին նայեցաւ հարցական նայուածքով մը:

—Գիտե՛ս քեզի խօսած էի մեծ ծրագրի մը մասին,

շարունակեց Աշոտ, զոր կուլտածանց յղացած էր արմիններ առաջ, . . . արդ, այդ ծրագիրը գործադրել որոշեցինք:

Կտավարիչը որ միայն ծրագրին գոյութիւնը զետեղէր, իսկ անոր բնութեան մասին կատարելապէս անգիտակ էր, ա՛լ աւելի հարցական նայուածք մը ձեւացուց:

— Երկու ամիսէն Պոլիսը պիտի առնենք, տե՛ս ինչպէս . . .

Ու Աշոտ իր բարեկամին պարզեց կուլտածանցի սահմանն յատակագիծը:

Միտը մտիկ ըրաւ աչք ու ականջ կտրած, հիացման, յափշտակութեան հասնող վերացումով մը: Երբ Աշոտ խօսքը լսեցուց մէկէն ի մէկ բառ մը չկրցաւ գտնել իր կարծիքը յայանելու համար:

— Է՛յ, ի՛նչ կ'ըսես ասոր, պնդեց դասատուն իր յաղթական, աշխարհակալ նայուածքովը կտավարիչը կապկպած:

— Վարդանը ողջ ըլլալու էր, գոչեց մէկէն գպրոցի կառավարիչը:

— Ո՛ր Վարդանը:

— Մամիկոնեան . . . Վարդան Մամիկոնեանը:

Դպրոցի կառավարչին, պարոն Ղուկասի, տկար կողմէն էր Վարդան Մամիկոնեանը: Անսահման, անվիճելի, անբացատրելի հիացում մը ունէր անոր նկատմամբ որ ա՛լ մտութեան կը հասնէր: Ամէն կնճիռի, ամէն արգելի, ամէն ձախորդութեան զիմաց Վարդանը կը յիշէր: Ա՛յ Վարդանը, եթէ Վարդանը ո՛ղջ ըլլար . . . ա՛լ այն ատեն թաղականները կանոնաւորապէս պիտի վճարէին իր ամսականները, զինեպանը պիտի չհամարձակէր խարդախուած օդին իբր Այվալըք ծախելու, ուսումնական խորհուրդը առաջին կարգի ուսուցչի վկայականը պիտի տար իրեն, Հայաստանը պիտի փրկուէր, Տաճկաստանը պիտի կործանէր, Ռուսաստանը հիմնայատակ ըլլար եւ Պարսիկները Հայերուն հպատակ: Պատուհաս խմբին մէջ մանկէլ ի վեր ա՛լ աւելի շեշտուած էր իր վարդանապաշտութիւնը. — «Վարդան Մամիկոնեան մը պէտք է այս գործին պոլիսը» կը կրկնէր ամէն անգամ որ իրենց գումարուձեւերուն մէջ յեղափոխական գործունէութեան մասին կը խորհրդակցէին: Իր ընկերները թէ՛ն կ'ըզգային քիչ մը Վարդան Մամիկոնեանի այդ անհարկի միջամտութեան, անխուսափելի ոտնձգութեան ծիծաղելութիւնը իրենց ամէն մանր ու խոշոր ծրագիրներուն մէջ, բայց աչք կը զոցէին ի նկատ անելով պարոն Ղուկասի միամիտ, անկեղծ ու ճշմարտապէս հայրենասէր ոգին: Միայն Աշոտն էր որ կ'ընդվզէր Վարդանին ճնշիչ ուրուականին դէմ, կանակը Նաբոլէոնին տուած՝ որ իրեն համար այն էր ինչ որ էր Վարդան Ղուկասին համար: Այս էր պատճառը — «ո՛ր Վարդանը» կէս հեղանկան հարցումին զոր վերը յիշեցինք:

— Եթէ Վարդանը Նաբոլէոն ըլլար Աւարայրի պատերազմին մէջ չէր յաղթուեր, կը պնդէր Աշոտ, ամէն

անկամ որ Ղուկաս իր սիրական հերոսը կը փառաբանէր:

Բայց այս իրիկուն այդ տեսակ վիճաբանութեամբ ժամավաճառ ըլլալու ատեն չէր և գասատուն չուզեց Վարդան—Նաբոլէոնեան անվերջանալի խնդիրը արծարծել. նոյնիսկ հետեւեալ սրտապնդիչ խորհրդածութիւնը ըրաւ.

— Եթէ Վարդանը մեռած է իր թոռները ողջ են եւ ո՛վ զիտէ թէ մեր մէջն ալ Վարդաններ չի կան՝ որոնք երեւան պիտի գան մեծ առիթները ներկայացած ատեն:

Աշոտի կողմէ այս խօսքերը, եթէ ոչ նահանջում, գոնէ զիջողութիւն մըն էին, և Ղուկաս՝ ճշմարտապէս յուզուած՝ զարմանքով ու գոհութեամբ խառն շեշտով մը գոչեց.

— Կեցցե՛ս, այո՛, անշուշտ երեւան պիտի գան . . . և ո՛վ զիտէ . . .

Չշարունակեց խօսքը, բայց մենք կրնանք լրացնել, «Եւ ո՛վ զիտէ որ ինքն ալ առիթը ներկայացած ատեն Վարդան մը պիտի չըլլայ:»

Դպրոցի կառավարիչը վերանորոգել տուաւ օդիին գաւաթները:

Միշտ երբ զբօսարանը գտնուէր Ղուկաս, Վարդանի յիշատակը ազած ձուկի ազդեցութիւնը կ'ընէր իր վրան. խմելու պապակը կ'աւելցնէր:

Երկու բարեկամները միասին մեկնեցան երբ ճաշի ժամը մօտեցաւ և ժամադիր եղան, կերակուրէն ետքը, Մարտիկի տունը:

Աշոտի ցորեկուան մտածուքը կամաց կամաց ցրուեր էր. իրենց գործադրել որոշած ծրագրին վտանգները, զժուարթութիւնները, անկարելիութիւնները հեղհեղեղ անբերելի ճղեր էին մտքէն ու հիմակ պրծնէր միայն գործին յաջողութեան շլացումը ունէր: Երբ ներս մտաւ սենյակէն՝ ուր մայրն ու քոյրը իրեն կը սպասէին, զուարթ դէմքով մը գնաց համբուրել մօրը ձեռքը և տեղեկութիւն հարցնել օրուան անցքերուն մասին.

— Ի՛նչ ըրիք այսօր, հիւր եկա՛ւ, Մարկոս աղայինց հիւանդէն լուր մը առի՛ք:

Եւ մայր ու աղջիկ, գոհ ու քիչ մըն ալ հպարտ իրենց մասին ցոյց տրուած շահադրողութեան, սկսան մանրամասն համարատուութիւն մը օրուան եղելութիւններուն վրայ որ տեւեց մինչեւ կերակուրին աւարտիլը:

Երբ սեղանէն ելան, Աշոտ ծանր, հանդիսական կերպով, ըսաւ իր քրոջ.

— Սթեֆանիկ պատրաստուէ՛. Մարտիկին պիտի երթանք. ժողով ունինք:

Տիկին Թադուկ, Աշոտի մայրը, որ մինչեւ այն ատեն տղուն զուարթ վիճակէն ազդուելով՝ ինքն ալ ուրախ ուրախ կը խօսակցէր, յանկարծ, կիներու յատուկ կարողութեամբ, զոգ ելաւ տղուն խօսքերը լսելով, եւ երբ Սթեֆանիկ զուրս ելաւ զխարիկը գնելու համար, հարցուց Աշոտին:

— Ի՛նչ կայ որ . . . այսօր ժողովուրդ օրը չէ նէ՛ . . .
— Հոգ մի ընե՛ր, այսրիկ, բան չի կայ . . . վախնալու

բան չի կայ, պատասխանեց տղան ծիծաղելով, ամէն բան կարգին է և քիչ ատենէն ալ ամենքս մեր մուրատին պիտի հասնինք:

— Ամէն, ամէն, դոչեց մայրը դող ելլելուն չափ դուրս թեամբ հանդարտելով:

Տիկին թագուկ յիսուն տարեկան, նիհար, մաշած, այլ անուշ դէմքով կին մըն էր, որ հողի կուտար իր երկու զաւակներուն վրայ: Առաջին անգամ երբ իմացած էր իր տղուն յեղափոխական ըլլալը սոսկալի տագնապներ ունեցեր էր, աղաչք պաղատք էր Աշոտին որ քաշուի այդ վտանգաւոր գործերէն:

— Դուն մնացիր ազգդ փրկող. թո՛ղ ուրիշները մը տածեն. մեծ մարդիկներուն, հարուստներուն գործն է ատիկա, դուն նայ՛՛ որ մայրդ հանդիստ ընել տաս, քոյրդ կարգես: Վաղը դուխդ փորձանք մը գայ նէ՛՛ մէկը քեզի օգնութիւն չընիր... Ինչո՞ւ պէտք ույգ գործերը:

Բայց ամէն պաղատանք, ամէն յորդոր անօգուտ եղեր էր եւ վերջապէս ստիպուելը էր ընդունիլ յեղափոխական զաւակ մը ունենալու եւ յեղափոխականի մը մայր ըլլալու կրկին վիճակները: Յետոյ օր մըն ալ կարգը Սթենիկին եկեր էր եղբորը հետեւելու, սակայն արդէն մինչեւ այն ժամանակ թագուկ հանրմի գաղափարները ամէնօրեայ խօսակցութիւններու, յեղափոխական թերթերու ընթերցման ու մօտաւոր շլացուցիչ ապագայի մը ակնկալութիւններու մէջ բուրբոխի կերպարանափոխ եղեր էին և գրեթէ գոհութեամբ տեսեր էր իր աղջկան մասնակցութիւնը Աշոտի կազմած «Պատուհաս» խումբին մէջ:

Հիմա ինքն ալ անոնց չափ խանդով կը հետեւէր շարժումին, թէեւ քոյր ու եղբայր իր շատախօսութենէն վախնալով միշտ կը զղուշանային իրեն ներկայութեան խօսելու ժամուկ խնդիրներու մասին: Ասոր համար թագուկ հանրմ ստիպուած էր գոհանալու իրիկունները իր տղուն դէմքը զննելով, ներս մտած ատենը: Սնոր դէմքին արտայայտութենէն, ծիծաղէն կամ տխրութենէն կը չափէր ամէն բան: Աշոտի դէմքը տեսակ մը ծանրաչափ էր իրեն համար որով կը ջանար դուշակել հայկական խնդրին օրըստօրէական վիճակը:

— Սըֆաթը կը խնդայ կոր, գործերը աղկ ես, Աստուած տայ, կը մտածէր օր մը:

— Վճից կեռէ քեք երեսը կախ ներս մտաւ, գործը գէշ կ'երթայ կոր, Աստուած ողորմի, կը մտածէր որով օր մը:

(Շարունակելի)

ԹԻՒՐԲԻՈՅ ԶՈՐՍ ԿՈՂՄԸ

ՌՌԻՍՍԻԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Ապրիլ 6ին, Կ. Պոլսոյ ուսական դեպտան Պ. Զինովիէվ զնաց շնորհակալութիւն յայտնելու սուլթանին՝ երկաթուղիներուն խնդրին կարչադրութեանը համար, եւ միանգամայն հրաժեշտ անելով Ռուսիա ուղեւորեցաւ, ուր մէկ քանի շաբաթ պիտի մնայ Երևանուր հանդիստ մը անելու յոյնութիւններէն զօր իրեն տուաւ իր կառավարութեան յաղթանակը թիւրքիոյ ընդդիմութեանը վրայ:

Բեկրպուրկի կառավարութիւնն ալ հիմալ նոյն հանգիստը պիտի անէ՝ իր վաստկած գափնիներուն վրայ պահ մը մըսփելով, թէ չէ, իր յաջողութենէն քաջալերուած եւ միջազգային քաղաքական կացութեան իրեն նպաստաւոր հանգամանքէն օգտուելով, պիտի շարունակէ այն պահանջկոտ դիրքը զոր վերջին ամիսներս ընդգրկեց ընդդէմ թիւրքիոյ: Դ՛ն Յրկաթուղիներու խընդիրը չվերջացած, Վիէնայէն կը գրէին Սթանտարտի թէ «երկաթուղիներու պայմանագրութիւնը լսկ մէկ մասն է ուսական բազմակողմանի ծրագրի մը որ ուղղուած է թիւրքիոյ և սուլթանին դէմ»: Այդ քաղաքականութեան յայտարար տեղեկութիւն մը Կ. Պոլսն ծայր կուտայ ահա: Ապրիլ 9ին կը հեռագրեն անկից թէ, «շատ տարածուած զրոյցի մը նայելով, Ռուսիա ածուխի կայքեր կը խնդրէ հիմա թիւրքիայէն՝ Հոողոս եւ Թէնէտոս կըղզիներուն մէջ: Եթէ ասիկա ճշմարիտ է, յարաբերութիւն ունենալու է Սև ծովու ուսական նաւատորմին շարժման մէջ դրուելու գործողութեան հետ, որ տակաւին առաջ կը տարուի: Ռուսիոյ մէջ գործերուն արդի կացութիւնը պէտք չունի ածուխի երկու կայքերու Միջերկրականի մէջ, և եթէ այդ կայքերը կը խնդրէ՝ կը նշանակէ թէ գէպի Միջերկրական ճամբայ մը ձեռք ձգած է կամ ձգել որոշած է:»

Անգլիական ուրիշ աղբիւրներու նայելով, Ռուսիա սակայն մտադիր չէ անմիջապէս օչտուելու երկաթուղիներու խնդրին մէջ ձեռք բերած յաջողութենէն: Տէյլի թիկէկրաֆի Կ. Պոլսոյ թղթակցին խօսքով, շատ մը շքեղանակներու մէջ տարակոյս կը տիրէ թէ «Ռուսիա դիտաւորութիւն ունենայ Փոքր-Ասիոյ մէջ իրեն տրուած երկաթուղիները շինելու: Սամսոնի, Սըվազի, Վանի եւ Տիարպէթիի գիծերը առևտրական տեսակետով շատ պըզտիկ արժէք մը ունին և լսկ ոսգմագիտական կարևորութիւն մը ունին: Ըրգհանուր կարիքը սըւոր կը միտի թէ դեռ շատ տարի բան մը պիտի չըլլայ:»

Ռուսական մամուլը այդ կարծիքէն չէ, ու իր պահանջումները շատ աւելի հեռուն կ'երթան: Սվիէր, զօրավար Քոմարոֆի հեղինակաւոր թերթը, կը յայտարարէ թէ ուսականութիւնը երկաթուղիի պայմանագրութեան կնքումը՝ չկրնար

բաւականաչափ փոխարինութիւն մը նկատուիլ Պաղտատի գերմանական երկաթուղիին դէմ: Բեղրպուրկի քաղաքատնտեսական շրջանակներուն մէջ, համոզումը կը տիրէ թէ Պաղտատի երկաթուղին Սիպերիոյ մեծ երկաթուղիէն պիտի խլէ ինքնատաննորդը այն կարևորութեան զոր այս վերջինը պիտի ունենար եթէ Պաղտատի գիծը չլինուէր: Հետևաբար, կ'ըսէ զօրավար Քոմարոֆ, Ռուսիա ո՛չ միայն կը յուսայ, այլ եւ հաստատապէս միտքը դրած է իր ազգեցութեան շրջանակը տարածել Պարսկաստանի, Աֆղանիստանի, Պէլուճիստանի վրայ, մինչեւ Ինդոս: Երբոր ասիկա հաստատուի, Ռուսիա միջոցները պիտի ունենայ Կեղրոնական Ասիան պաշտպանելու Անգլիոյ մեքենայութիւններուն և ոտնձգութեանց դէմ, եւ միանգամայն Անգլիոյ եւ Գերմանիոյ հաւասար զօրեղ զիրքը մը պիտի ունենայ Արեւելքի մէջ: Ռուսիա ան ատեն տէրը պիտի ըլլայ երկաթուղիի մեծ ճամբու մը Պարսկաստանի մէջէն գէպի Հնդկական Ուկրանոսը, և իր սիպերական մեծ գիծը պիտի ստանայ այն ահագին եւ տիեզերական կարեւորութիւնը որուն համար շինուեցաւ:

ՌՈՒՍԻՈՅ ԹՈՂՈՒԱԾ ԾՐՁԱՆԱԿԸ

Մինչեւ հիմա չհրատարակուեցաւ պատճէնը այն պայմանագրութեան որ Ռուսիոյ եւ Թիւրքիոյ միջեւ կընքուեցաւ՝ երկաթուղիներու մասին, ոչ ալ այն իրատիւն որ կը վաւերացնէ այդ պայմանագրութիւնը: Ռուսիոյ թողուած շրջանակին սահմանները շատ որոշ չեն ամէն կողմէ տրուած տեղեկութեանց մէջ: Բիւրքի թղթակցին նայելով, ուսական սէնտիքաներու երկաթուղիի արտօնութիւններ պիտի շնորհուին Գասթէմունիի և Տրապիզոնի նահանգներուն մէջ, Սև ծովու եզերքին վրայ, ինչպէս նաև Էշդրումի եւ Վանի նահանգներուն մէջ: այդ շրջանակին մէջ, ինչպէս յայտնի է, մինչեւ հիմակ արտօնութիւն մը տրուած չէ Գերմանացիներու: Պայմանագրութիւնը կ'ըսէ թէ Դուռը յանձն կ'տոնէ առաջնութիւնը Ռուսներուն տալ յիշեալ նահանգներու մէջ երկաթուղիներ շինելու համար, եթէ Թիւրք կառավարութիւնը ինքն իր ծախքովը չլինէ զանոնք: Այս վերջին պայմանը զբրուած է պարզապէս Թիւրքիոյ պատիւը փրկելու համար, որովհետեւ բնաւ հաւանական չէ որ Դուռը երբեք կարենայ երկաթուղի շինել իր սեփական միջոցներով:

Պերլինէն աւելի որոշ կերպով կը գծեն ուսական շրջանակը: Ատաբազարէն Էրէլլիի գծին արեւելեան եւ Էնկիւրի-Կեսարիա, Սըվազ-Խարբերդ եւ Տիարպէքի-Վան գծերուն հիւսիսակողմը գտնուած ամբողջ տարածութիւնը՝ Ռուսիոյ շրջանակը կը կազմէ, այսինքն, Անատոլիոյ գերման ընկերութեան շինած կամ շինելիք ատաբազար-Էրէլլի, Էնկիւրի-Կեսարիա, Սըվազ-Խարբերդ և Տիարպէքի-Վան գծերը սահմանադրուելը կը կազմեն ուսական շրջանակին: Փոքր-Ասիոյ քարտէսին վրայ ակնարկ մը նետելով, զիւրաւ կարելի է գաղափար մը կազմել այդ շրջանակին տարածութեանը մասին:

Շինութեան պայմանները այնչափ սպաստաւոր պայմաններն են որոնք Գերմանիոյ տրուեցան Պաղտատի գրծին համար: Օրինակի համար, անոնք որ սկիզբները Սամսոն-Սըվազի գծին արտօնութիւնը կը խնդրէին, կը շատանային քիւրդեր զլուս 12,000 ֆրանքի երաշխաւորութեամբ մը, մինչդեռ Պաղտատի գիծը առնուազն 15,000 ֆրանքի երաշխաւորութիւն մը ունի: Ընդհանրապէս խօսելով, ուսական առաջադրեալ երկաթուղիները շինելու դժուարութիւնները աննշան են Պաղտատի ճամբուն զբոսարութեանցը հետ բաղդատելով, եւ երկիրը աւելի բազմամարդ է, այնպէս որ Պաղտատի գծին հաւասարաչափ տրուած երաշխաւորութիւնը ակներև կերպով չափազանց է:

Սրանտարտի Կ. Պոլսոյ թղթակիցը կը կարծէ թէ Սամսոն-Սըվազի գծին շինութեանը համար զրամագլուխը պիտի գտնուի և շատ չանցած շինութիւնը պիտի սկսի: Նոյն թղթակիցը կ'իմանայ թէ Ռուսիա աշխատեր է ձեռք ձգելու Վան-Տիարպէքիի գիծն ալ, և սակայն Գերմանացիները յաջողեր են այդ գիծը իրենց շրջանակին վերապահել: Բաց ի այդ Սամսոն-Սըվազի և Տիարպէքի Վանի երկաթուղիները, միւսները առետրական մեծ արժէք մը ունենալ չեն թուիր, այլ լոկ ուղղակիական կարեւորութիւն մը ունին:

Բեղրպուրկի քաղաքական շրջանակներուն մէջ Դուրան հետ կնքուած պայմանագրութեան լուրը մեծ գոհութեամբ ընդունուեր է: Համապարական կուսակցութիւնը միայն, ինչպէս տեսանք, Սվիտչի բերնով, անբաւական կը նկատէ այդ յաջողութիւնը, եւ աւելի ընդարձակ սահմաններու մէջ կ'ուզէ ամրապնդուած տեսնել ուսական ազգեցութիւնը:

ՖՐԱՆՍՍԵՒԻ ԿԱՐԳԸ

Կ. Պոլսէն կը հեռագրեն ապրիլ 6 թուականով թէ, հիմակ որ Ռուսիա իր երկաթուղիի պահանջումները ձեռք բերաւ Փոքր-Ասիա, Ֆրանսա հաւանորէն նմանօրինակ պահանջումներ պիտի ընէ Սիւրիոյ մէջ երկաթուղիներ շինելու համար:

Բեղրպուրկէն առնուած տեղեկութիւններ ցոյց կուտան թէ Ռուսիա խոստացած է Ֆրանսայի ոյժ տալ այս գործին մէջ:

ՆՈՐ ՄԱՐՍԵՐ ԵՒ ՆՈՐ ՏՈՒՐԲԵՐ ԹԻՒՐԲԻՄ

Թիւրք կառավարութիւնը հիմակ նոր դուռարութեան մը մասնուած է, այս անգամ վեց մեծ պետութեանց հետ: Թիւրքիոյ գանձը ամէն ժամանակէ աւելի դատարկ է, և կառավարութիւնը չի գիտեր ո՛ր պատին զարնել զուխը՝ առօրեայ ամէնէն անհրաժեշտ ծախքերը կատարելու համար:

Կայսերական իրատէ մը մարտի սկիզբները հրամայեց օտար ապրանքներուն մաքսատուրքին վրայ հարկերին 3 յաւելում մը ընել, — այսինքն, փոխանակ հարկերին 8 մաքսի՝ հարկերին 11 մաքս մը առնել:

Բայց այդ յաւելումը կարելի չէ ի գործ դնել առանց կանխաւ համաձայնութեան մը գալու օտոր պետութեանց հետ որոնք առեւտրական դաշնագիր ունին Թիւրքիոյ հետ: Ու, աւելորդ է ըսել, օտար պետութիւնները բնաւ տրամադիր չեն ընդունելու այդ յաւելումը: Մարտի 10ին, Կ. Պոլսոյ զեօպանները հաւաքական ծանուցագիր մը յանձնեցին Դրան, բողոքելով այդ յաւելման դէմ: Դուռը, մարտ 22ին պատասխանելով, կրկնեց թէ «որչուած է» մայիս 14էն սկսեալ այդ յաւելումը ի գործ դնել, երկրին ելմտացոյցը հաւասարակշռելու համար: Մարտ 27ին, զեօպանները երկրորդ հաւաքական ծանուցագիր մը զրկեցին՝ զրական կերպով յայտարարելով թէ չեն կրնար հաւանիլ մաքսատուրքերուն յաւելման՝ առանց նախապէս համաձայնութիւն մը կայանալու պետութեանց և Թիւրքիոյ միջեւ:

Ապրիլ 4ին Դուռը ասոր պատասխանեց՝ «ոչ կարեմք»ով մը, և ապրիլ 9ին զեօպանները երրորդ ծանուցագիրով մը կրկնեցին իրենց ասջի ըսածները:

Խնդիրը կը մնայ ուրեմն ուր որ է:

Կ. Պոլսոյ զեօպանական շրջանակներուն մէջ կ'ընդունին երկրին զրամական անձուկ կացութիւնը, բայց ատոր պատճառը ոչ այլ ինչ է եթէ ոչ երկրին յոռի վարչութիւնը: Թիւրքիոյ տարեկան բացը մինչեւ հիմակ իբր 1 միլիոն ոսկի էր, մինչդեռ այս տարի 3 միլիոն ոսկիի կը հասնի: Միւս կողմէ նշանակելի է թէ ելմտական յանձնաժողովին ըրած առաջարկը՝ պետական ծախքերուն մէջ ընդհանուր խնայողութիւն մը ընելու, պալատին կողմէ չէ ընդունուեր:

Կ. Պոլսոյ բնակող Անգլիացի մը այս խնդրին վրայ կը գրէ.

«Վերջերս՝ Երլազդի սահմանները ընդարձակելու ձեռնարկութիւն մը սկսաւ, և այս գործին համար՝ 100,000 ոսկիի կանխավճար մը խլուեցաւ Օսմ. Պանքայէն: Ամէն օր, խումբ խումբ կ'ինքր Մալիէն կը պաշարեն՝ իրենց թռչակներուն համար: Փարս մը ստացած չունին, որովհետեւ փարս մը չկայ գանձին մէջ: Հանգստեան սնտուկին զրամազուխը շատոնց է որ ծախսուած է, և տարիներէ ի վեր պաշտօնեաները հազիւ մէկ քանի ամսական կը ստանան տարին: Եւ սակայն, օր չ'անցնիր որ նոր ու առատ ամսականով պաշտօններ չյանձնուին պալատին աչքը մտած մարդերու, կամ այնպիսիներու որոնց հետ հաշտ երթալը խոհեմութիւն կը համարուի, և ասոնք են միայն որ կանոնաւորապէս կը գանձեն իրենց ամսականները, մինչդեռ բուն աշխատողները անօթի են:

«Եթէ իրացնէ փափաք կայ ելմտացոյցը հաւասարակշռելու, ամիսը հազարաւոր ոսկիներու խնայողութիւն մը ընել կարելի է՝ շնչելով լրտեսներու բանակը որոնք կեանքը անտանելի կը դարձնեն ամէն խորհող Թիւրքի: Ասոր յաջորդելու է հիմնական բարեկարգութիւն մը այն զեղծութիւններուն դէմ զորոնք նախարարներէն շատը ի գործ կը դնեն կամ կը թողարկեն: Բայց այդ բաները կարելի չէ ընել՝ առանց Պետութեանց կողմէ ազգու ձեռնարկի մը

խորտակելու համար ապականեալ խմբակը որ տարիներէ ի վեր կը վարէ Թիւրք կայսրութիւնը:»

Բայց եթէ օտար պետութիւնները կ'ընդդիմանան մաքսատուրքերուն յաւելմանը, ո՞վ ձայն պիտի բարձրացնէ ինպատ Թիւրքիոյ խեղճ ժողովրդին, որու դիւնու վրայ նոր տուրքեր կը ծանրանան հիմակ: Կայսերական իրատէ մը հրամայած է հարիւրին 6 յաւելում մը ընել տասանորդին (հօշիար) և ոչխարի տուրքին (աղնամ) վրայ: Ժողովուրդը որ արդէն տուրքերուն տակ կը հեծէ, ինչպէս պիտի կրնայ այս նոր բեռը տանիլ: Գաւառներէն առնուած տեղեկութիւնները ցոյց կուտան թէ տժգոհութիւնը երթալով կը շատնայ այս նոր տնօրինութեան դէմ: Թիւրքիացի մը կ'ըսէ թէ «տարակուսական է որ այդ յաւելումը ո և է գործնական արդիւնք ունենայ շատ նահանգներու մէջ, ուր ասջի տուրքերը իսկ գանձելու այնքան մեծ դժուարութիւն կայ. կամ, Հայերուն պէս, անկարող են վճարելու, և կամ, Քիւրտերուն կամ Անաւուտներուն պէս, յօժար չեն վճարելու:

Տամատ Մահմուտ փաշա իր երկրին զգացմանը ճշմարիտ թարգմանը կը հանդիսանայ հետեւեալ հեռադրովը զոր Բարիզէն զրկած է սուլթանին՝ այս տուրքերու յաւելումներուն առթիւ.

«Վեհափառ Տէր, խորապէս կը ցաւինք տուրքերուն յաւելման լուրը առնելով: Այդ ճգմող բնաւարութեան տնօրինութիւնը՝ կ'ապացուցանէ տրդարութիւնը այն տըրտունջներուն որոնք կը բարձրանան ձեր վարչական հրէշտութեանցը դէմ, Թիւրքիոյ համար այնքան ազիտաբեր: Յանուն մեր ժողովրդին նուիրական շահերուն, որուն պաշտպանութեանը համար եկած ենք այստեղ, ձեզի խորհուրդ կուտանք ի գործ չդնել այս նոր տանջանքը: Փոխանակ ձեր ասարաբազդ ժողովուրդը ճգմիլու անտանելի տուրքերու բեռանը տակ, զիւրաւ կրնաք ձեր կառավարութեան հասոյթներուն նուազման փոխարէնը ձեռք բերել՝ վճանելով ձեզ շրջապատող գողերը և լրտեսները, և եթէ հանրային գանձուն թողուք ձեր անհուն եկամուտին մէկ մասը:»

Լ. Զ.

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ԴԱԻ ՄԸ

Եթէ մեր յեղափոխութիւնը օր մը իր Հազար եւ Մէկ Գիշերներու վէպը անենայ, անոր էն համով մասը պիտի կազմէ ՄԼքքէի եւ ՄԼտինէի մէջ հայ յեղափոխական շարժումի մը զրուագը, զոր անգլիական լրտեսները հետեւեալ կերպով կը ծանուցանեն:

Վերջերս Երլազդի պալատը սարսափահար կը մնայ աներեւակայելի լուրի մը վրայ: Պոլսոյ օտտիկանութիւնը

կը տեղեկագրէ թէ հայ յեղափոխականներ իսլամ ուխտաւորի կերպարանքով Հիճազ գացեր են, հոնկէ հակասուլթանական յայտարարութիւններ տարածելու համար իսլամութեան կեդրոնին մէջ: Սուլթանը այս ահեղ վշտանդին առջեւ շուտ աճեցու համար կը հրամայէ քըննիչ յանձնաժողովի մը անմիջապէս Հիճազ առաքուի: Ոստիկանական բարձրաստիճան պաշտօնէի մը, Մէհմետ-Սլի պէյի նախագահութեան ներքեւ յանձնաժողովի մը ճամբայ կ'իյնայ: Եղելութիւնն ալ նախապէս կը հետազոտի Հիճազի կուսակալ Ահմետ Բաթիպ փաշայի որ զաւի մը կասկածը կունենայ, Պոլսոյ ոստիկանական բարձրուն քիչ շատ տեղեակ ըլլալով: Յանձնաժողովը այնինչ ոտքը Հիճազ կը դնէ, կուսակալը քննիչներուն պայտակները քննելու նախազգուշութիւնը կունենայ. եւ ահա անոնց մէջ կը գտնէ ծրարով հակասուլթանական յայտարարութիւններ: Ոստիկանութեան խողը կը յայտնուի: Այս յայտարարութիւնները իբր թէ Հիճազ պիտի բռնուէին, եւ թէ, իսլամութեան կեդրոնաւայրը բազմութիւ խեղճեր, եւ թէ՛ Պոլիս շատ մը հայեր պիտի ձերբակալուէին և ահագին զործ մըն էր կը բացուէր ոստիկանութեան, որուն նախարարը անշուշտ իր աչալընութեանը համար լիառատ վարձատրութիւններ պիտի ստանար իր մեղսակիցներուն հետ:

Բաթիպ փաշա իր զիւար կը հետագրէ Պոլիս. Ոստիկանութեան նախարարը Երլազ կը կանչուի, եւ այնպիսի ծանր յանդիմանութիւններ կը լսէ որ երկու անգամ կը մարի կ'իյնայ, ... բայց ոչ պաշտօնէն:

ԼՈՒՐԵՐ

ՉՕՐԸ ԵՒ ՊՈՏՐԻՍՐԻՔԸ . Կ. Պոլսէն հետեւեալը կը հետագրեն Սթանտարտի.

«Վերջերս երկար բարակ չգրադեցայ Հայոց պատրիարքին բազմաթիւ գանգատներովը՝ որոնց հետեւանքը եղաւ իր հրաժարունը, որուն վրայ տակաւին կը պեղի, քեպէտ սուրբանը կը մերժէ զայն: Ի միջի այլ հնարքներու Պատրիարքը գանգատներու երկար ցանկ մը դրկեց անձնապէս Չարին: Երէկ սոսակական դեպքակին միջոցաւ տարտաւ պատասխտել մը ստացաւ, որով իրեն կը հաստատուի Չարին կայսերական համակրանքը և հոգածոչքիներ Հայ եկեղեցիին վերաբերմամբ, բայց շատ միսիրարոչքիւն չի տար: Պատրիարքը շատ տժգուն է, և հիմակ կը սպասէ Ռոսիոյ Սուրբ Սիւնդիին դրկուած տրտունջներու նմանօրինակ ցանկի մը պատասխանին:»

Այս լուրին կարեւորոչքիներ աներկրայական է: Եւ որովհետեւ անձաւոր է մեզի Չարին ոչոյդուած գանգատներուն քննարկները եւ առարկան, առելի ընդարձակ տե-

ղեկուքեանց սպասելու հար՝ը կը ստիպէ մեզ ու եւ է մեկնոչքիւն վերապահել:

ԵՐԻՏԱՍՍԱՐԻ ԹԻԻՐԲԵՐԸ. Մոռատ պէյ Պոլսէն վերստին փախեր է: Հանրաժանօր հրապարակագիրը չորս տարի առաջ արտասանման անցնելով Երիտասարդ Թիւրքիոյ վարիչներէն մին եղած էր, բայց բարեկորդուններուն գործադրութեանը համար սուրբանէն տրուած խոստումներուն վրայ Պոլիս վերադարձած էր եւ պետական խորհրդին անդամ նշանակուած էր: Ապրիլ 8ին Մոռատ պէյ պաշտօնակիցներուն կը ծանուցանէ քե սուրբանը խոստումները կատարած չլլալով ինքն ալ պաշտօնէն կը հրաժարի: Ու այս յայտարարութեան անմիջապէս յետոյ կ'աներեւոյրանայ: Ոստիկանութեան փնտրողները սպարդիւն մնացեր են:

Թիւրք գրագետ, տպագրիչ եւ պետական խորհրդի անդամ Էպոչիս Թեֆիզ պէյ ապրիլ 10ին Պոլիս Երբասիւրն'ը և Փոքր-Ասիոյ ներսերը սքսորուեր է: Նախընթաց օրը ոստիկանութիւնը Թեֆիզ պէյի տրպարանը խոչարկութիւն ընելով գտած էր Պոլսոյ պատերը փակցնելու սահմանուած հակասուրբանական յայտարարութիւններ: Կ'ըստի քե ոստիկանութիւնը ինքն է պատրաստած եւ տպարանը ձգած այդ բոչքերը:

Խօսք կայ քե Երիտասարդ Թիւրքերը մօտերս Պոլիս ցոյց մը պիտի ընեն, դեպքակներէն բարեկորդուններու գործադրութիւնը խեղճելու համար:

Պոլիս լուր կայ քե Տաւատ Մանուտ փաշա մօտերս Լոնտոն պիտի գայ եւ պիտի միանայ երկու նշանաւոր քիւրքերու, որոնց մին է՝ Միտհատ փաշայի որդին՝ Ալի Հայտար պէյ, եւ միւրը՝ խորհրդակալ գերաստանին անդամ Մոնամետ Ալի փաշա: Ասուք պիտի կազմեն Երիտասարդ Թիւրքիոյ վարիչ կեդրոնական քովիքին:

ՍՈՒԼԹԱՆԻՆ մեկ աղջկան փախած ըլլալուն լուրը պաշտօնապէս կը հերքուի:

ՀԱՍՏԻ ՈՒ ԲԱԺՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ին եւ 15ին: Բաժնեկիւն է Երօսպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բնձնեղին ղրկել առ

L. FRANK,
27, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.